



Համարը N 358-Ն

Տիպը Որոշում

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2007.02.01/3(243) Հոդ.24

Ընդունող մարմինը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Ստորագրող մարմինը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.07.2007

Տեսակը Ինկորպորացիա

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 27.12.2006

Ստորագրման ամսաթիվը 27.12.2006

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

+ Կապեր այլ փաստաթղթերի հետ

+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՍԱՄԻՆ

«Գրս

ՀՀ արդարադ

նախարարութ

23 հունվ

Պետական գրանցման թ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

N 358-Ն

27 դեկտեմբերի 2006 թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետը՝ Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները (հավելված):

2. Ուժը կորցրած ճանաչել՝

ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 2-ի «Ցածր լարման սպառող (բացառությամբ բնակչության) մոտ բազմասակազնային հաշվառքի սարքեր տեղադրելու և գիշերային զեղչ սակագնից օգուտ մասին» N 7 որոշումը,

բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության սպա էլեկտրական էներգիայի հաշվառման բազմասակազնային համակարգի անցման կարգը» հաստատելու մասին» N 26 որոշումը

գ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի սեպտեմբերի 28-ի N 26 որոշմամբ հաստատված կարգի մ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 23 որոշումը,

դ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 29-ի «Էլեկտրակ

Էներգիայի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնները հաստատելու մասին» 22 որոշումը,

ե) Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 29-ի «Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոնները հաստատելու մասին» N 22 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ մտնելու մասին» N 76-Ն որոշումը,

զ) Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 29-ի N 22 որոշման մեջ փոփոխություն լրացում կատարելու մասին» N 2-Ն որոշումը,

է) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 29-ի N 22 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 125-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Ա

**Հավելված
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 358-Ն որոշման**

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնները կանոնակարգում են էլեկտրամատակարարող ընկերության և սպառողի, ինչպես նաև էլեկտրամատակարարող էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացման դիմում ներկայացրած անձանց հարաբերությունը **(1-ին կետը խմբ. 08.10.14 N 379-Ն, լրաց. 17.05.17 N 161-Ն)**

2. Էլեկտրամատակարարող ընկերությունը պարտավոր է էլեկտրաէներգիա մատակարարել յուրաքանչյուր սպառողի, որ սույն կանոններով սահմանված կարգով կնքել է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիա մատակարարման պայմանագիր կամ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր:

(2-րդ կետը խմբ. 08.10.14 N 379-Ն, փոփ. 31.05.17 N 220-Ն)

2.1 Էլեկտրամատակարարող ընկերությունը սպառողի էլեկտրական ցանցին միացման յուրաքանչյուր կետի համար սպառողի էլեկտրաէներգիայի հաշվառման նպատակով սույն Կանոններով սահմանված կարգով տեղակայում է առևտրային հաշվառող (բացառությամբ սպառողի սեփականությունը հանդիսացող 6 կՎ և բարձր լարման հոսանքի ու լարման չափիչ տրանսֆորմատորի և սպառված էլեկտրաէներգիայի մասին տվյալների պահպանման նպատակով բացում և վարում է առանձին հաշվառման քս համարանիշով (այսուհետ՝ հաշվառման քարտ կամ քարտի համար): Հաշվառման քարտում պահպանվում են սպառողի՝ էլեկտրական ցանցին միացման կետի միացման ժամկետի, հարաչափերի, դրանց հետագա փոփոխությունների, ինչպես նաև սպառված (վերահաշվարկված) էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին ողջ տեղեկատվությունը: Հաշվառման քարտի տեղեկատվությունը էլեկտրամատակարարող ընկերությունը պահպանում է այն էլեկտրական ցանցից անջատելու պահից առնվազն 3 տարի ժամկետով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:

(2.1-ին կետը լրաց. 13.07.11 N 334-Ն, խմբ. 08.10.14 N 379-Ն)

2.2 Էլեկտրամատակարարող ընկերությունը սպառողի (բացառությամբ՝ բնակչության) էլեկտրական ցանցին միացման կետում սպառված էլեկտրաէներգիան կարող է հաշվառել առանց առևտրային հաշվառողի սարք տեղակայելու այն դեպքում, սպառողի սպառման համակարգի դրվածքային հզորությունը չի գերազանցում 0,5 կՎտ-ն, իսկ անվանական լարումը 0,22 կՎ սպառված էլեկտրաէներգիայի հաշվառման իրականացնելով սպառողի սպառման համակարգի դրվածքային հզորությամբ՝ տեղակայվող սարքավորումների աշխատանքային ժամերին համապատասխան: Նման դեպքում էլեկտրամատակարարող ընկերությունը պետք է ստանա սպառողի գրավոր համաձայնությունը և վերջինիս հետ կնքված Պայմանագրում ներառի նաև սպառման համակարգի նկարագիրը, հզորությունը և աշխատանքային ժամերը:

(2.2-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

2.3 Չի թույլատրվում սպառողներից կամ էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձանցից պահանջել կլվճարներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրանց ծանուցել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն սույն Կանոններով, Պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակ

(2.3-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

3. Սույն կանոններում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

էլեկտրամատակարարող ընկերություն (մատակարար)՝

էլեկտրական էներգիայի (այսուհետև՝ էլեկտրաէներգիա) բաշխման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

սպառող (բաժանորդ)՝

էլեկտրական էներգիայի (հզորության) սպառման պահանջարկ ունեցող անձ, ով Պայմանագիր է կնքել մատակարարման լիցենզիա ունեցող անձի հետ կամ գտն գործընթացում.

ենթասպառող (ենթաբաժանորդ)՝

սպառող, որի էլեկտրամատակարարումն իրականացվում է այլ սպառողի ցանց (էլեկտրատեղակայանքներից), և որն ունի կնքված երկկողմ կամ եռակողմ Պայ

տեխնիկական պայմաններ՝

սպառողի սպառման համակարգը նվազագույն ծախսումներով էլեկտրական ցա միացնելու պայմաններ, որոնք անհրաժեշտ են էլեկտրական ցանցին միացման նշված տեխնիկական հարաչափերով էլեկտրամատակարարման և հաշվառման ապահովման համար.

պայմանագրային էլեկտրական հզորություն (պայմանագրային հզորություն)՝

էլեկտրական ակտիվ հզորության կեսժամյա միջին առավելագույն մեծությունը, ամրագրվում է Պայմանագրով.

ամրագրված տեխնոլոգիական հզորություն՝

Պայմանագրում ամրագրված այն ակտիվ հզորությունը, որը Պայմանագրով սահ ժամկետում պարտավոր է ապահովել մատակարարը՝ արտադրության մեջ գտն հումքի վերամշակումը մինչև վերջ հասցնելու կամ առանց արտադրական սարքավորումների վնասման հումքն արտադրությունից առանց խոտանի հանել

ամրագրված վթարային հզորություն՝

Պայմանագրում ամրագրված այն ակտիվ հզորությունը, որը վթարային ռեժիմնե Պայմանագրով սահմանված ժամկետում պարտավոր է ապահովել մատակարա մարդկանց կյանքը և անվտանգությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովող էլեկտրասարքավորումների աշխատանքն ապալ համար.

օպերատիվ անձնակազմ՝

էլեկտրաէներգետիկական համակարգի, ինչպես նաև սպառողի 6 (10) կՎ և բար էլեկտրատեղակայանքների տեխնոլոգիական կարգավարման գործընթացում նե մասնագիտացված անձնակազմ՝ կարգավարներ, հերթապահներ.

օպերատիվ փաստաթղթեր՝

հատուկ հաշվառման մատյաններ, որոնցում օպերատիվ անձնակազմի կողմից ժամանակագրական կարգով կատարվում են գրանցումներ՝ հաստատված սխեմ շեղումների, էլեկտրատեղակայանքների աշխատանքի ռեժիմների, օպերատիվ անձնակազմի կողմից կատարված գործողությունների և այլնի վերաբերյալ. **(պարբերությունն ուժը կորցրել է 08.10.14 N 379-Ն)**

սահմանազատման կետ՝

էլեկտրատեղակայանքների հաշվեկշռային պատկանելության սահման.

էլեկտրամատակարարման պլանավորված ընդհատում (պլանային ընդհատում)՝

էլեկտրատեղակայանքների վրա պլանային-նախագրուշական աշխատանքներ և նպատակով սպառողի հոսանքազրկում.

**Էլեկտրամատակարարման
չպլանավորված
ընդհատում
(արտապլանային
ընդհատում)՝**

Էլեկտրատեղակայանքների (այդ թվում՝ առևտրային հաշվառքի սարքի) խափսարոյունքում, ռելեական պաշտպանության կամ ավտոմատիկայի սարքերի գործհետևանքով սպառողի հոսանքազրկում.

հաշվառքի սարք՝

Չափագիտական մարմնի կողմից ստուգաչափված էլեկտրաէներգիայի հաշվիչ՝ Էլեկտրաէներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների միացությունների համախումբ.

**առևտրային հաշվառքի սարքի
խախտում՝**

Չափագիտական մարմնի կողմից հաստատված՝ չափագիտական փորձաքննուեգրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալն խափանումները կամ դրանց վնասվածքները, կամ առևտրային հաշվառքի սարք կնիքների բացակայությունը, կամ դրանց կեղծված կամ վնասված լինելը, այդ թի հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների հարաչափերի կամ միացման սխեմաների փոփոխությունը կամ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի նկատմամբ որևէ անձի կողմից այլ ներգործությունները.

**սպառման համակարգ՝
Էլեկտրական ցանցին պարզեցված
միացում՝**

սպառողի կամ նոր սպառողի էլեկտրատեղակայանքների համախումբ. նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրա ցանցին 0.22 կՎ և 0.4 կՎ լարմամբ, մինչև 30 կՎ.Ա հզորությամբ միացում, երբ ր համար նախատեսված է Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 65 որոշմամբ հաստատված ստանդարտ միացման վճար և չի պահանջվում հողայլ աշխատանքների իրականացում.

Չափագիտական մարմին՝

«Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապլ օրենքով սահմանված պետական չափագիտական հսկողություն իրականացնող կազմակերպություն:

համակարգի օպերատոր՝

Հայաստանի Հանրապետության Էլեկտրաէներգետիկական համակարգի կարգս համար պատասխանատու՝ օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ո անձ.

կրիտիկական (վթարային) իրավիճակ՝

Էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած այնպիսի իրավիճակ, երբ համակարգի կամ մատակարարի օպերատորի գնահատմամբ սպառողին մատս էլեկտրաէներգիայի որակը կամ էլեկտրակայանքների ամբողջականությունն սս համար էլեկտրամատակարարման սահմանափակումներն անխուսափելի են:

Պայմանագիր՝

սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգի մատակարարման պայմանագիր կամ էլեկտրական էներգիայի մատակարարմս պայմանագիր

(3-րդ կետը խմբ. 21.12.07 N 658-Ն, լրաց. 08.12.10 N 699-Ն, խմբ. 04.05.11 N 216-Ն, լրաց. 07.03.12 N 6 խմբ., փոփ., լրաց. 08.10.14 N 379-Ն, խմբ. 03.08.16 N 230-Ն, լրաց. 17.05.17 N 161-Ն, 31.05.17 N 220-Ն, խւ 19.06.19 N 214-Ն)

4. Պայմանագրում նշվում կամ դրան կցվում են.

- 1) առևտրային (վերստուգիչ) հաշվիչի, հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների գործարանային համարները և տեխնիկական հարաչափերը,
 - 2) սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեման,
 - 3) սպառողի էլեկտրական թույլատրելի առավելագույն հզորությունը,
 - 4) սպառողի էլեկտրատեղակայանքներին միացված ենթասպառողի տվյալները (անվանումը, անունը, գտնվելու (բնակուր վայրը, առևտրային և վերստուգիչ հաշվիչների, դրանց հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների գործարանային հաս տեխնիկական հարաչափերը, ենթասպառողի էլեկտրական թույլատրելի առավելագույն հզորությունը),
 - 5) էլեկտրական ցանցի և սպառման համակարգի սահմանագատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանագատման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից սահմանված ակտը,
 - 6) տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում մատակարարի և սպառողի միջև՝ սույն կանոնների N 4 է պահաջների համաձայն կազմված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորությունների ամրագրման վերաբերյալ ակտը:
- Սույն կետով սահմանված պահանջները բնակչության համար կիրառելի են սույն կանոններով և Պայմանագրով սահմանս դեպքերում:

(4-րդ կետը խմբ. 08.10.14 N 379-Ն, փոփ. 17.05.17 N 161-Ն)

4.1 Պայմանագիրը կնքվում, վերակնքվում կամ դրանում փոփոխություն է կատարվում Հանձնաժողովի կողմից սահմանվ Պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան և ժամկետում:

(4.1-ին կետը լրաց. 09.12.15 N 409-Ն)

4.2 Պայմանագիրը կարող է փոփոխվել և վերակնքվել ինչպես մատակարարի, այնպես էլ սպառողի նախաձեռնությամբ, փոփոխվել են դրա կնքման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը կամ Պայմանագրում ամրագրված տեխնիկական հա

(4.2-րդ կետը լրաց. 09.12.15 N 409-Ն)

4.3 Հաղորդման ցանցին Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններին համապատասխան միացած անձի դիմումով Պայմանագրի կնքման, ինչպես նաև սպառողի նախաձեռնությամբ Պայմանագր վերակնքման կամ փոփոխման դեպքում վերջինիս մատակարարին ուղղված դիմումի հետ պետք է ներկայացնի սույն կանոն կետի 1-ին և 5-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը և տեղեկատվությունը: Սույն կետում նշված Պայմանագրի կնքման վերակնքման դիմումը մատակարարի կողմից ուսումնասիրվում և սույն կետին համապատասխանելու դեպքում Պայմանագիր վերակնքվում կամ դրանում փոփոխություն է կատարվում դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(4.3-րդ կետը լրաց. 09.12.15 N 409-Ն, խմբ. 17.05.17 N 161-Ն)

4.4 Պայմանագիրն իր նախաձեռնությամբ լուծելուց առաջ մատակարարը պարտավոր է նախապես տեղեկացնել սպառող **(4.4-րդ կետը լրաց. 19.06.19 N 214-Ն)**

5. Սպառողի շահագործման մեջ գտնվող, նոր միացվող, վերակառուցվող էլեկտրատեղակայանքները պետք է համապատասխանեն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

6. Սպառողին վերաբերող սույն կանոնների բոլոր դրույթները հավասարապես տարածվում են նաև ենթասպառողի վրա:

7. Սպառողը պարտավոր է ենթասպառողի կամ մատակարարի այլ ցանցերի էլեկտրամատակարարումն ապահովելու հա էլեկտրատեղակայանքներով հաղորդել մատակարարի էլեկտրաէներգիան:

8. Սույն կանոնների 32-րդ և 33-րդ կետերով սահմանված դեպքերում մատակարարը պարտավոր է սպառողի էլեկտրաըն էլեկտրամատակարարումը դադարեցնելիս, ապահովել այդ ժամանակահատվածում ենթասպառողի կամ իր այլ ցանցերի էլեկտրամատակարարումը: Այդ ժամանակահատվածում սպառողի էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներ կորուստները հաշվառվում են մատակարարի հաշվին: Սպառողը պարտավոր է ապահովել մատակարարի անձնակազմի ան մուտքը իր էլեկտրատեղակայանքներ՝ դրանց միացված ենթասպառողի կամ իր այլ ցանցերի էլեկտրամատակարարումն աա համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումներ (փոխանջատումներ, լրացուցիչ սարքավորումների տեղադրում և այլն) իրականացնելու համար: Մատակարարի անձնակազմին սպառողի կողմից մուտք չտրամադրելու արդյունքում մատակարար իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով վերջինիս կրած վնասը փոխհատուցում է սպառողը:

(8-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն)

9. Մատակարարը պարտավոր է փոխհատուցման պայմանագրով սահմանված կարգով վճարել հանձնաժողովի սահման մեթոդիկայով հաշվարկված սպառողի մատուցած ծառայության վճարը՝ սպառողի կողմից հաշիվը ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

(9-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն)

10. Այն դեպքում, երբ սպառողի էլեկտրատեղակայանքների վնասման կամ հրաժարման պատճառով ընդհատվել է ենթա էլեկտրամատակարարումը կամ մատակարարի այլ ցանցերին էլեկտրաէներգիայի հաղորդումը, մատակարարը իրավունք ու սպառողի հետ համաձայնեցնելով կատարվելիք աշխատանքների արժեքը, սեփական միջոցներով փոխարինել կամ վերանորո վերջինիս այն էլեկտրատեղակայանքները, որոնք անհրաժեշտ են մատակարարի էլեկտրաէներգիան հաղորդելու համար: Նմ դեպքում սպառողը պարտավոր է փոխհատուցել մատակարարի կատարած ծախսերը:

11. Մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ անձնակազմի փոխհարաբերությունները կանոնակարգվում են մատակարարի և սպառողի (բացառությամբ՝ բնակչության) օպերատիվ փոխհարաբերությունների կար համաձայն N 1 հավելվածի:

(11-րդ կետը խմբ. 06.04.07 N 155-Ն, փոփ. 21.12.07 N 658-Ն)

11.1 էլեկտրաէներգետիկական կրիտիկական (վթարային) իրավիճակներում մատակարարի և սպառողի փոխհարաբերու կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում մատակս կողմից իրականացվելիք գործողությունները և սպառողներին այդ ծրագրերում ներառելու կարգով՝ համաձայն N 4 հավելված **(11.1-ին կետը լրաց. 17.05.17 N 161-Ն)**

12. Մատակարարի և սպառողի միջև ծագած վեճերը լուծվում են Հանձնաժողովի միջոցով կամ դատական կարգով:

12.1. Մատակարարը և սպառողը միմյանց պատճառած վնասի համար կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: **(12.1-ին կետը լրաց. 24.10.18 N 393-Ն)**

Գ Լ ՈՒ Խ 2

ՆՈՐ ՄՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՄՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱ՝ ՄԻԱՅՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (վերնագիրը լրաց. 09.11.16 N 303-Ն)

13. Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն (այսուհետ՝ նոր սպառման համակարգ) էլեկս ցանցին միացման ծախսերը (ներառյալ՝ նախագծային և նախահաշվային, էլեկտրատեղակայանքների, առևտրային հաշվար ձեռքբերման և տեղակայման, այդ թվում՝ այլ անձանց էլեկտրատեղակայանքներում բջիջների տեղակայման, շինարարակս

կարգաբերման և թողարկման, ինչպես նաև նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման ծախսերը), բացառապես սույն կանոնների 14.3 կետում սահմանված դեպքերի, իրականացնում է մատակարարը՝

1) 0.22 և 0.4 կՎ լարումներով սնման հայտ ներկայացրած առանձնատների և առանձին շինությունում գտնվող սպառողն ղեկավարում՝ մինչև առանձնատան մուտքային կանգնակը՝ օդային գծով մուտքի ղեկավարում, կամ շինության արտաքին պատին և կողմից տեղակայվող մուտքային վահանակը՝ մալուխային գծով մուտքի ղեկավարում.

2) 6(10) կՎ լարումով սնման հայտ ներկայացրած սպառողների ղեկավարում՝ մինչև սպառողին սնող ենթակայանի մուտքայ կոմուտացիոն սարքի սեղմակները՝ մալուխային գծի ղեկավարում, և սպառողի կողմից տեղակայվող վերջին հենասյան մեկուսիչ՝ օդային գծով սնման ղեկավարում.

3) բազմաբնակարան շենքերի ղեկավարում.

ա. բազմաբնակարան շենքի բնակարանների ղեկավարում՝ մինչև բնակարանների սնման գծերի միաֆազ և եռաֆազ հաշվա սարքերի էլեկտրը.

բ. բազմաբնակարան շենքում տեղակայված առևտրային սպառողների ղեկավարում՝ մինչև շենքի սպասարկման, շենքում տեղակայված օբյեկտների և շենքի անվտանգության համար նախատեսված սպառման համակարգերի միաֆազ և եռաֆազ հ սարքերի էլեկտրը:

(13-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, 03.08.16 N 230-Ն)

13.1 Մատակարարը նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար գանձում է Հանձնաժողովի 200 դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճ հաստատելու մասին» N 659-Ն որոշմամբ հաստատված միացման վճարներ: Կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացնում, մասն հետ Կանոնների N 2 հավելվածին համապատասխան կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամաս սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման պայմանագիր (այսուհետ՝ Միացման պայմանագիր) կնքում և միացվ Վճարները վճարում է կառուցապատողը: Նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար միացման վճ գանձվում, երբ էլեկտրական ցանցին միացված 0.4 կՎ և բարձր լարման սպառողի սպառման համակարգից առանձնացված՝ սպառողի սպառման համակարգը միացվում է էլեկտրական ցանցին՝ առանց սպառման համակարգի հզորության և սնման ս սխեմայի փոփոխության: Այդ դեպքում առանձնացած նոր սպառողի առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման և տեղա աշխատանքներն իրականացնում է մատակարարը՝ անվճար: Մատակարարը և էլեկտրական ցանցին միացված սպառողը, մ սպառողին էլեկտրական ցանցին միացնելը, փոփոխություն են կատարում Պայմանագրում՝ համամասնորեն նվազեցնելով էլե ցանցին միացված սպառողի սպառման համակարգի պայմանագրային հզորությունը:

(նախադասությունը հանվել է 31.05.17 N 220-Ն)

(13.1-ին կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, լրաց., փոփ. 08.10.14 N 379-Ն, լրաց. 03.08.16 N 230-Ն, փոփ., խմբ 31.05.17 N 220-Ն)

13.1.1 Կանոններով նախատեսված պայմանագրերը կնքվում են անվճար՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտր եղանակով պայմանագրի կնքումն իրականացվում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ Մատակարարի կայքում տեղադրված համակարգի միջոցով:

(13.1.1-ին կետը լրաց. 27.11.13 N 405-Ն, խմբ. 31.05.17 N 220-Ն)

13.1.2 Մատակարարը պարտավոր է նոր սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմաններ տեղակայել Մատակարարի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում՝ քաղաքացիների համար տեսանելի վայրում, և պաշտոնական կայքում:

(13.1.2-րդ կետը լրաց. 03.08.16 N 230-Ն)

13.2 Նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացվում է նոր սպառողի կամ կառուցապատողի, կամ սպառող (այսուհետ՝ Դիմող անձ) գրավոր դիմումի հիման վրա, կամ համաձայն սույն կանոնների N 3 հավելվածի՝ էլեկտրոնային եղս Դիմող անձի՝ էլեկտրական ցանցին միացման դիմումը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը.

1) կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, գտնվել սպառման համակարգի միացման հասցեն, կազմակերպության ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի կա կողմից լիազորված անձի հեռախոսահամարը, կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ՝ հարկ վճարողի հաշվառման ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագիրը (պատճենահանելուց հետո վերադարձվում է):

Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում ներկայացվում են նաև կազմակերպության ղեկավարի, անհատ ձեռնարկատ ֆիզիկական անձի կամ նրանց կողմից լիազորված անձի անձնագիրը (պատճենահանելուց հետո վերադարձվում է) և էլեկտրս փոստի հասցեն,

2) պահանջվող հզորությունը (դրվածքային և օգտագործվող), լարման մակարդակը, միացման տեսակը (միաֆազ, եռաֆ սպառման տեսակը (կենցաղային, ոչ կենցաղային), ոչ կենցաղային սպառման դեպքում նաև համակարգի տեխնիկական բնո ինչպես նաև՝ Դիմող անձի հայեցողությամբ, էլեկտրամատակարարման պահուստային սնուցման ապահովման անհրաժեշտ մասին իր պահանջները,

3) 0.4 կՎ և բարձր եռաֆազ լարման էլեկտրական ցանցին միանալու դեպքում՝ էլեկտրամատակարարման համակարգի կամ տարածքի հատակագիծը՝ նշելով նոր սպառման համակարգի միացման կետը կամ կետերը, սպառման տեսակը, իսկ բազմաբնակարան շենքերի համար նաև սպառման ներքին սխեման՝ նշելով էլեկտրաէներգիայի հաշվառման կետերը, շենքի հարկայնությունը, բնակարանների թիվը, շենքում տեղակայվող այլ սպառողների դրվածքային հզորությունը, շենքում տրամս էլեկտրավահանակի և հաշվառքի սարքերի տեղադրման տեղերը,

4) (Ենթակետն ուժը կորցրել է 03.08.16 N 230-Ն)

5) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության, հողամասի) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքներ ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթղթերը, բացառությամբ՝ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործող տարածքների, այդ թվում՝ ավտոկայանատեղիների և վերելակների, ինչպես նաև սույն կանոնների 13.7.1 կետով նախատեսված դեպքերի:

(13.2-րդ կետը լրաց. 13.06.12 N 208-Ն, խմբ. 06.03.13 N 62-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն, փոփ., լրաց. 09.11.16 N 409-Ն, փոփ., խմբ., լրաց. 03.08.16 N 230-Ն, փոփ., լրաց. 09.11.16 N 303-Ն)

13.3 Դիմող անձի՝ սույն կանոնների 13.2 կետում նշված դիմումն ստանալուց հետո մատակարարը՝

1) դիմումն առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացված լինելու դեպքում ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերի, ստուգում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունն ու դրանց համապատասխանության պարագայում անձին ներկայացնում սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ իր կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին:

2) համայնքի վարչական տարածքի բնակավայրի սահմանից դուրս 0,22 և 0,4 կՎ լարմամբ սպառման համակարգի կամ բարձր լարմամբ, կամ կառուցվող բազմաբնակարան շենքի, կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգի միջոցով ներկայացվելու դեպքում, կամ եթե ներկայացված դիմումը վերաբերում է սպառման համակարգի պահուստային սնուցման ավանդակներ (այսուհետ՝ բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքեր), սույն կանոնների 13.2 կետով նշված դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

ա. մշակում է տեխնիկական պայմաններն ու (կամ) էլեկտրամատակարարման ուղեգիծը և համաձայնեցնում Դիմող անձին: Դիմող անձին է ներկայացնում սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կամ Միացման պայմանագիր կնքելու առաջարկ՝ իր կողմից ստորագրված պայմանագրի 2 հետ միասին:

(13.3-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն, խմբ. 03.08.16 N 230-Ն, փոփ. 09.11.16 N 409-Ն, խմբ. 31.05.17 N 220-Ն, խմբ. 02.05.18 N 140-Ն)

13.3.1. Դիմումում (այդ թվում՝ դրան կից ներկայացված փաստաթղթերում) թերությունների առկայության դեպքում մասնաճյուղի կանոնների 13.3 կետում նշված ժամկետներում, Դիմող անձին առաջարկում է վերացնել թերությունները: Նման դեպքում համապատասխան թերությունները վերացնելու և մատակարարին կրկին ներկայացնելու պահից դիմումը համարվում է մատակարարված:

(13.3.1-ին կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.3.2. Դիմող անձը սույն կանոնների 13.3 կետում նշված պայմանագիրը սահմանված կարգով ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, դրան համաձայն լինելու դեպքում իր կողմից ստորագրված պայմանագրի մեկ օրինակը ներկայացնում է մատակարարին ստանալու պահից՝ 10 օրվա ընթացքում, Դիմող անձի ստորագրած պայմանագրի օրինակը մատակարարին վճարված հանձնելը համարվում է էլեկտրական ցանցին միացման դիմումից Դիմող անձի հրաժարում:

(13.3.2-րդ կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.3.3. Այն դեպքում, երբ սույն կանոնների 13.3 կետի 1-ին ենթակետի համաձայն պայմանագրի կնքումից հետո մատակարարում է, որ առկա է սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպք, ոչ ուշ, քան պայմանագրի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Դիմող անձին է ներկայացնում պայմանագրի փոփոխման վերաբերյալ գրավոր առաջարկ՝ վերջինիս ուղարկող կողմից ստորագրված՝ պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր օրինակից):

(13.3.3-րդ կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.3.4. Դիմող անձը սույն կանոնների 13.3.3 կետում նշված առաջարկը սահմանված կարգով ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, դրան համաձայն լինելու դեպքում իր կողմից ստորագրված Համաձայնագրի մեկ օրինակը ներկայացնում է մատակարարին: Առաջարկն ստանալու պահից՝ 10 օրվա ընթացքում, Դիմող անձի ստորագրած Համաձայնագրի օրինակը մատակարարին փաստացի չհանձնելու դեպքում համապատասխան պայմանագիրը համարվում է լուծված, իսկ Դիմող անձը վճարված էլեկտրական ցանցին միացման վճարը պայմանագիրը լուծված համարվելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում է վերադարձման:

(13.3.4-րդ կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.3.5. Սույն կանոնների 13.3.4 կետով սահմանված կարգով պայմանագիրը համարվում է փոփոխված՝ Դիմող անձի կողմից Համաձայնագրի ստորագրված մեկ օրինակը մատակարարին ստանալու պահից:

(13.3.5-րդ կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.3.6. Սույն կանոնների 13.3.5 կետի համաձայն պայմանագրի փոփոխման դեպքում էլեկտրական ցանցին միացման ժամկետում է հաշվարկվել սույն կանոնների 13.3 կետում նշված պայմանագրով նախատեսված կանխավճարի կամ դրա տարբեր վճարման, բայց ոչ շուտ, քան պայմանագրի փոփոխմանը հաջորդող աշխատանքային օրվանից:

(13.3.6-րդ կետը լրաց. 02.05.18 N 140-Ն)

13.4 Մատակարարը սույն կանոնների 13.5 կետում սահմանված ժամկետներում՝

1) մշակում է անհրաժեշտ նախագծային և նախահաշվային փաստաթղթերը, իսկ պարզեցված միացման դեպքում՝ միատեխնիկական նկարագիրը:

2) կատարում է բոլոր անհրաժեշտ համաձայնեցումները պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ

հետ.

3) իրականացնում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման շինարարական աշխատանքները, տեղադրված հաշվառքի սարքը և ծանուցում Դիմող անձին.

4) *(Ենթակետն ուժը կորցրել է 31.05.17 N 220-Ն)*

5) անհրաժեշտության դեպքում ստանում է պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմին կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը):

(13.4-րդ կետը լրաց. 07.12.11 N 566-Ն, խմբ. 07.03.12 N 65-Ն, փոփ. 30.04.14 N 103-Ն, 25.11.15 N 387-Ն խմբ. 03.08.16 N 230-Ն, փոփ., լրաց. 31.05.17 N 220-Ն, լրաց. 24.10.18 N 393-Ն)

13.5 Կանոնների 13.3 կետում նշված պայմանագրով, իսկ սույն կանոնների 13.3.5 կետով նախատեսված դեպքում Համաձայնագրով նախատեսված կանխավճարի (կառուցապատողի դեպքում՝ միացման վճարի) վճարման օրվանից մինչև Դիմող անձին փաստ էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝

1) էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանկ կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 50 օրը.

2) էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանց լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 55 օրը.

3) էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 90 օրը.

4) էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ կառուցվող բազմաբնակարան շենքի, կամ կառուցապատվող թաղ միացման դեպքում՝ 290 օրը:

(13.5-րդ կետը փոփ. 07.12.11 N 566-Ն, խմբ. 07.03.12 N 65-Ն, փոփ. 30.04.14 N 103-Ն, 25.11.15 N 387-Ն խմբ. 03.08.16 N 230-Ն, խմբ., փոփ. 31.05.17 N 220-Ն, 15.11.17 N 491-Ն, խմբ. 02.05.18 N 140-Ն, փոփ. 08.13.18 N 130-Ն)

13.5.1. Կանոնների 13.5 կետում նշված ժամկետների խախտման պատճառների և էլեկտրամատակարարմամբ ապահով ակնկալվող ժամկետների մասին մատակարարը պարտավոր է գրավոր տեղեկացնել Դիմող անձին՝ խախտման պատճառներ գալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

(13.5.1-ին կետը լրաց. 25.10.17 N 452-Ն)

13.6 Այն դեպքում, երբ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միա համար անհրաժեշտ է սպառողի պահանջածից ավելի բարձր լարման սնող գծի կամ ենթակայանի կառուցում, ապա փաստ էլեկտրամատակարարմամբ ապահովման առավելագույն ժամկետը ընդունվում է համապատասխան բարձր լարման սպառող էլեկտրական ցանցին սույն կանոնների 13.5 կետով նախատեսված փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովման ժամ

(13.6-րդ կետը փոփ. 31.05.17 N 220-Ն)

13.7. 6 (10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում նոր միացվող կամ վերակառուցվող սպառման համակարգը տակ դնելու համար Դիմող անձը մատակարարին է ներկայացնում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը):

(13.7-րդ կետը լրաց. 30.05.12 N 187-Ն, խմբ. 06.03.13 N 62-Ն, լրաց. 03.08.16 N 230-Ն, խմբ. 25.10.17 N 220-Ն)

13.7.1. Այն դեպքերում, երբ էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ բնակիչ-դիմող անձի իր (այդ թվում՝ սեփականության, օգտագործման) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակազմված, սակայն առկա է իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ էլեկտրամատակարարվող տարածքում դիմող անձի բնակույ փաստը հավաստող տեղեկանք, Մատակարարը, գնահատելով սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման հնարավորությունը և դրա հետ կապված իր ռիսկերը, իրավասու է կնքել սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր:

(13.7.1-ին կետը լրաց. 03.08.16 N 230-Ն, խմբ. 09.11.16 N 303-Ն, փոփ. 31.05.17 N 220-Ն)

13.7.2. էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման դեպքում, երբ էլեկտրասպառման համակարգը էլեկտրական ցանցին (եթե էլեկտրամատակարարման համար նախագծանախահաշվային, շինման առաջին փուլին, հաշվառման տեղակայման և այլ աշխատանքների հետ կապված հավելյալ ծախս չի պահանջվում), մատակարարին ներկայացվում է դիմ պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, անձը հաստատող փաստաթուղթը, հեռախոս սպառման համակարգի միացման հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամար սպառման համակարգի միացման հասցեն, իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ՝ հարկ վճարողի հաշվառման իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում ներկայացվում է նաև դիմող անձի էլեկտրոնային հասցեն.

2) իրավաբանական անձի դեպքում՝ էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության, հողամասի) նկատմամբ դիմողի իրավունքները հավաստող (հաստատող) փաստաթղթերը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության, հողամասի) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստ կամ իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ էլեկտրամատակարարվող տարածքում դիմող անձի բնակության փաստը հետևյալ տեղեկանք:

(13.7.2-րդ կետը լրաց. 09.11.16 N 303-Ն, փոփ. 31.05.17 N 220-Ն)

13.7.3. Սույն կանոնների 13.7.2 կետով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, մատակարարը Դիմող անձին ներկայացնում է էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման առաջարկ:

(13.7.3-րդ կետը լրաց. 25.10.17 N 452-Ն)

13.7.4. Էլեկտրամատակարարվող տարածքի (շենք, շինություն) նկատմամբ իրավունք ունեցող անձի կողմից սույն կանոն 13.7.2 կետով սահմանված դիմումը ներկայացնելու դեպքում, եթե սպառողը չունի տարածքի (շենք, շինություն) նկատմամբ ի իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ, մատակարարը Էլեկտրական Էներգիայի մատակարարի կնքման առաջարկը ներկայացնում է սույն կանոնների 32-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան Պայմանագրի հետ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

(13.7.4-րդ կետը լրաց. 19.06.19 N 214-Ն)

13.8 Հանձնաժողովը, նոր սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, առանձին դեպքերում մատակարարի կամ Դիմող անձի դիմումի (կից հիմնավորումներով) հիման վրա, մատակարարի և Դիմող անձի համաձայնող դեպքում կարող է ընդունել Էլեկտրական ցանցին միացման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն որոշմամբ սահմանված սոցիալապես անապահով ընտանիքների նոր սպառման համակարգերն Էլեկտրական ցանցին միացման վճարների սահմանմանն ուղղված անհատական որոշումներ:

(13.8-րդ կետը լրաց. 06.03.13 N 62-Ն, խմբ. 03.08.16 N 230-Ն, 28.08.19 N 317-Ն)

13.9 Ճարտարապետահատակագծային առաջադրանք ձևավորելու փուլում, առաջադրանք տվող իրավասու մարմինը Էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով դիմում է մատակարարին՝ կից ներկայացնելով սույն կանոն 13.2 կետով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

(13.9-րդ կետը լրաց. 06.03.13 N 62-Ն)

14. Ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմնի դիմումն ստանալուց հետո մատակարարի և ներկայացնում է տեխնիկական պայմանները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճան (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար 5 աշխատանքային օրվա ընթացքում, III ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, IV և V ռիսկայնության աստիճանի օբյեկտների համար՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

(14-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն)

14.1 Ճարտարապետահատակագծային առաջադրանք ստացած կառուցապատողը սույն կանոնների 13.2 կետով նախատեսված դիմումի հետ մեկտեղ մատակարարին է ներկայացնում նաև Ճարտարապետահատակագծային առաջադրանքին կից տրված տեխնիկական պայմանները:

(14.1-ին կետը խմբ. 06.03.13 N 62-Ն)

14.2 Սույն գլխում նշված բոլոր ծանուցումները, առաջարկները և համաձայնեցումները մատակարարի կողմից իրականացվող կամ Էլեկտրոնային եղանակով: Դրանք Դիմող անձին կամ Ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմնի ներկայացնելու ծախսերը կրում է մատակարարը:

(14.2-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, լրաց. 31.05.17 N 220-Ն)

14.3 Սույն գլխի դրույթները՝ բացառությամբ 13.2 կետի, չեն կիրառվում, երբ՝

1) նոր սպառման համակարգը Էլեկտրական ցանցին միացվում է ժամանակավոր (շինարարություն)՝ մինչև Ճարտարապետահատակագծային առաջադրանքում նշված շինարարության ավարտի ամսաթիվը, ժամանակավոր առևտուր առավելագույնը վեց ամիս ժամկետով, և այլ դեպքերում՝ առավելագույնը մինչև մեկ տարի ժամկետով),

2) նախատեսվում է նոր սպառման համակարգը Էլեկտրական ցանցին միացնել 6 (10) կՎ (միայն համայնքի վարչական սահմանների սահմաններից դուրս), 35 կՎ կամ 110 կՎ լարմամբ, և Դիմող անձը՝ իր հայեցողությամբ, ցանկություն է հայտնի սպառման համակարգը Էլեկտրական ցանցին միացնել մատակարարից տեխնիկական պայմաններ ստանալու միջոցով,

3) Էլեկտրական ցանցին է միացվում հանրային Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձի՝ հանրապետության հաղորդակցության ցանցի շահագործումն ապահովող նոր կամ վերակառուցվող սպառման համակարգը,

4) Էլեկտրական ցանցին է միացվում մինչև 0,5 կՎ տ դրվածքային հզորությամբ և 0,22 կՎ անվանական լարմամբ նոր սպառման համակարգ, և Դիմող անձը՝ իր հայեցողությամբ, ցանկություն է հայտնի նոր սպառման համակարգն Էլեկտրական ցանցին մատակարարից տեխնիկական պայմաններ ստանալու միջոցով՝ առանց հաշվառքի սարքի տեղակայման:

(14.3-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, 08.10.14 N 379-Ն, խմբ., լրաց. 03.08.16 N 230-Ն)

14.4 Սույն կանոնների 14.3 կետում սահմանված դեպքերում Դիմող անձի սպառման համակարգը Էլեկտրական ցանցին մատակարարից տեխնիկական պայմաններ ստանալու միջոցով՝ դիմող անձի կողմից իր միջոցներով: Այդ նպատակով Դիմող մատակարարին է ներկայացնում սույն կանոնների 13.2 կետով պահանջվող փաստաթղթերը, իսկ շինարարության իրականացման նպատակով ժամանակավոր միացման համար տեխնիկական պայմաններ ստանալու դեպքում նաև շինարարության թույլտվություն է ստանալու պարտադիր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իր դիմումի մեջ կատարելով համապատասխան տեխնիկական պայմաններ տրամադրելու վերաբերյալ: Մատակարարը Դիմող անձի դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, մշակում և Դիմող անձին է ներկայացնում վերջինիս նոր սպառման համակարգը Էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի ընթացքում այլ ժամկետ չի նախատեսված: Տեխնիկական պայմաններով երկրորդ անկախ սնում տրվում է, եթե դա նախատեսված Դիմող անձի նոր սպառման համակարգի նախագծով: Մատակարարը Դիմող անձից գանձում է 2000 դրամ (ներառյալ ավելի արժեքի հարկը) ծառայության վճար, որը վերադարձման ենթակա չէ: Պայմանագիր կնքելու նպատակով Դիմող անձը մատակարարին ներկայացնում է Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող (հաստատող) փաստաթղթերը, իսկ 6 (10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում՝ նաև պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված Էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվություն): Մատակարարը Դիմող անձից այդ փաստաթղթերն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, տեղակայում է

անձի առևտրային հաշվառքի սարքերը և վերջինիս հետ կնքում է Պայմանագիր: Առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերում տեղակայումը և Պայմանագրի կնքումն իրականացվում են մատակարարի կողմից՝ անվճար:

(14.4-րդ կետը խմբ. 06.03.13 N 62-Ն, լրաց. 08.10.14 N 379-Ն, փոփ. 31.05.17 N 220-Ն)

14.5 (կետն ուժը կորցրել է 06.03.13 N 62-Ն)

14.6 (կետն ուժը կորցրել է 06.03.13 N 62-Ն)

Գ Լ ՈՒ Խ 3

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԷԼԵԿՏՐՈՒԵՆԵՐԳԻՍՅՈՒՄԻ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

15. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի N 1925-Ն որոշմամբ հաստատվել է կտրամագնիսական համատեղելիության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված էլեկտրաէներգիայի որս խախտելու դեպքում պատճառները և որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման ժամանակ որոշվում են մատակարարի կամ սպառողի չափիչ սարքերի գրանցումներով, իսկ այդ սարքերի բացակայության դեպքում՝ համապատասխան հաշվարկներով, մատակարարի և սպառողի օպերատիվ փաստաթղթերի գրառումների հիման վրա: Այդ մատակարարը և սպառողը կազմում են երկկողմանի ակտ:

16. Որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար մատակարարը փոխհատուցում է ս կրած վնասը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

17. Մատակարարը որակի ցուցանիշներից շեղումներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար պատասխանատվու կրում այն ժամանակահատվածում, որի ընթացքում սպառողը գերազանցել է պայմանագրային հզորությունը:

18. Սպառողների էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների (բացառությամբ ա հաշվառքի սարքերի) ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասարկման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ անկախ դրանց պատկանելությունից, կրում է մատակարարը՝

- 1) բազմաբնակարան շենքի բնակիչների դեպքում՝ մինչև սպառողի բնակարանը,
- 2) 0,22 կՎ լարմամբ սնվող մնացած սպառողների դեպքում՝ մինչև սպառողի շենքի, շինության կամ տարածքի կանգնալ բաշխիչ վահանը,
- 3) 0,4 կՎ և բարձր լարմամբ սնվող սպառողների դեպքում՝ մինչև Պայմանագրով ամրագրված սահմանազատման կետը: *(18-րդ կետը խմբ. 22.08.12 N 334-Ն)*

19. Առևտրային հաշվառքի սարքերի (բացառությամբ սպառողի սեփականությունը հանդիսացող 6 կՎ և բարձր լարման ու լարման չափիչ տրանսֆորատորների) ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման (ներառյալ՝ սպասա աշխատանքի ճշտության ստուգման, ստուգաչափման, նորոգման և պահպանման) ծախսերն ու պատասխանատվությունը՝ դրանց պատկանելությունից, կրում է մատակարարը, բացառությամբ սույն կանոնների 20-րդ, 65.2 և 65.3 կետերով սահմանվ դեպքերի:

(19-րդ կետը խմբ. 22.08.12 N 334-Ն, 12.02.14 N 16-Ն, փոփ., լրաց. 08.10.14 N 379-Ն)

20. Առևտրային հաշվառքի սարքերի շահագործման ընթացքում դրանց ամբողջականության պահպանման ծախսերը և պահպանման պատասխանատվությունը կրում է սպառողը, եթե վերջինս բազմաբնակարան շենքում գտնվող սպառող չէ, ա հաշվառքի սարքը տեղակայված է սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում և նշված է Պայմանագրում: Սույն կանոնների իմաստով սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանումը նրա պահպանումն է արտաքին մեխանիկական վնասվածքներից: Սպառողը նման դեպքերում պատասխանա չի կրում, եթե այդպիսի վնասվածքները առաջացել են սպառողի կամքից անկախ արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների արդյունքում:

(20-րդ կետը խմբ. 27.04.11 N 200-Ն, 22.08.12 N 334-Ն)

21. (կետն ուժը կորցրել է 22.08.12 N 334-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐՈՍՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Մատակարարը պարտավոր է սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին սույն կանոնների համապատասխանաբար 24-րդ և 26-րդ կետերով սահմանված պահանջների համաձայն:

23. (կետն ուժը կորցրել է 08.10.14 N 379-Ն)

24. Մատակարարը պարտավոր է սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատման հասցեի (վայրի), ընդ վերականգնման ժամկետների վերաբերյալ ընդհատման օրվանից առնվազն 3 օր առաջ տեղեկատվություն հրապարակել իր և իսկ առնվազն 1 օր առաջ՝ հանրապետական սփոման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երկու անգամ, առաջի՝ 20:00-ն, իսկ երկրորդը՝ 20:00-23:00-ն ընկած ժամանակահատվածներում: Սույն կետով չի սահմանափակվում պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին ծանուցման այլ եղանակով սպառողին լրացուցիչ իրազեկելու մատա

իրավունքը:

(24-րդ կետը խմբ. 08.10.14 N 379-Ն, 19.06.19 N 214-Ն)

25. Սպառողը (բացառությամբ բնակչության) իրավունք ունի, մատակարարի հետ համաձայնեցնելով, Պայմանագրում ս էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժաման դեպքում էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին մատակարար սպառողին պարտավոր է տեղեկացնել Պայմանագրով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

26. Էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատման և վերականգնման ժամկետների մասին տեղեկատվություն մատակարարը պարտավոր է սպառողին տրամադրել սույն կանոնների 74-րդ կետով նախատեսված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով:

27. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարար նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերը կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում մատակարարը սպառող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ժամը 9:00-17:00-ն ընկնելով ժամանակահատվածում՝ սակայն ոչ ավելի, քան 6 ժամ տևողությամբ:

Սպառողը (բացառությամբ բնակչության) և մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սահմանել ս կետում սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր ժամեր), եթե վերջինս չի հանգեցնում բնակչության համար սույն կետում սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման:

(27-րդ կետը խմբ. 16.06.11 N 300-Ն, լրաց. 27.02.13 N 53-Ն, փոփ. 09.11.16 N 303-Ն)

28. Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել արտապլանային ընդհատման պահանջում՝

1) քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝

ա. *(պարբերությունն ուժը կորցրել է 09.12.15 N 409-Ն)*

բ. այն սպառողներին, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգե սեկցիաներից՝ 2 ժամում.

գ. մյուս բոլոր դեպքերում՝ 4 ժամում,

2) գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝

ա. այն սպառողներին, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգե սեկցիաներից՝ 2 ժամում.

բ. մյուս բոլոր դեպքերում՝ 8 ժամում,

3) քաղաքային և գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմաններից դուրս՝

ա. այն սպառողներին, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգե սեկցիաներից՝ 2 ժամում.

բ. մյուս բոլոր դեպքերում՝ 12 ժամում:

(28-րդ կետը խմբ. 16.06.11 N 300-Ն, փոփ. 09.12.15 N 409-Ն, 09.11.16 N 303-Ն)

28.1. Սույն կանոնների 27-րդ և 28-րդ կետերում նշված պլանային և արտապլանային ընդհատումների գումարային տևող տարեկան կտրվածքով չպետք է գերազանցի՝ այն սպառողների համար, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից՝ 10 ժամը, քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում գտնվող մյուս սպառողների համար՝ 24 ժամը, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ 72 ժամը: Մինչև սույն էթե սպառողի (բացառությամբ բնակչության) էլեկտրամատակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են Պայմանագրով սահմանված ժամանակահատվածը:

(28.1-ին կետը լրաց. 16.06.11 N 300-Ն, 08.10.14 N 379-Ն, փոփ. 09.11.16 N 303-Ն)

29. (կետն ուժը կորցրել է 09.11.16 N 303-Ն)

29.1 Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր հնարավոր միջոցները սույն գլխում նկարագրված դեպքերում սպառող էլեկտրամատակարարումը հնարավորինս կարճ ժամկետում վերականգնելու համար:

(29.1-ին կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

30. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են համաձայն սույն կանոններ հավելվածով սահմանված կարգի:

(30-րդ կետը խմբ. 17.05.17 N 161-Ն)

31. Էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերը կիրառվում են էլեկտրաէներգետիկական համակարգու առաջացած այնպիսի իրավիճակներում, երբ սպառողին մատակարարվող էլեկտրաէներգիայի որակը կամ էլեկտրատեղակա ամբողջականությունն ապահովելու համար էլեկտրամատակարարման սահմանափակումներն անխուսափելի են: Էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերը կազմում են էլեկտրոլ համակարգի անվտանգությունն ու հուսալ ապահովող հաստատված ցուցանիշներից, ինչպես նաև որոշակի սպառողների էլեկտրամատակարարման առաջնահերթությո պայմաններից: Այդ սպառողների ցանկը ամեն տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

32. Մատակարարը պարտավոր է դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սպառողի կողմից գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում.

2) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունք իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ լուծելով Պայմանագիրը: Էլեկտրամատակարարվող ս (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում էլեկտրամատակարարման դադարեցմը Պայմանագրի լուծման հարցը որոշվում է վեճը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելը:

3) Կանոնների 14.3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետների ավարտի դեպքում՝ լուծելով Պայմանագիրը.

4) օրենքով նախատեսված դեպքերում:

(32-րդ կետը խմբ. 27.04.11 N 200-Ն, 09.11.16 N 303-Ն)

33. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝

ա) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սույն կանոններով և Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճա չկատարելու դեպքում.

բ) եթե մատակարարի անձնակազմին համապատասխան վկայականը ներկայացնելու դեպքում թույլ չի տրվել սպառողի համաձայնեցված ժամանակացույցով կամ Պայմանագրով սահմանված կարգով սպասարկել սպառողի տնօրինվող տարածք տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանել

գ) եթե սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց ս հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

դ) սույն կանոնների 14.4 կետի համաձայն էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ ս սպառողի էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններում էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում:

(պարբերությունն ուժը կորցրել է 08.10.14 N 379-Ն)

(պարբերությունն ուժը կորցրել է 08.10.14 N 379-Ն)

(33-րդ կետը լրաց. 27.04.11 N 200-Ն, փոփ., լրաց. 08.10.14 N 379-Ն)

34. Մատակարարը էլեկտրամատակարարումը վերականգնում է առանց սպառողին նախազգուշացնելու, բացառությամբ դեպքերի, երբ դա սահմանված է Պայմանագրով:

Գ Լ ՈՒ Խ 7

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՊԱՅՄԱՆ:

35. Առևտրային է համարվում Պայմանագրում նշված հաշվառքի սարքը: Սպառողը (բացառությամբ բնակչության) առև հաշվառքի սարքով հաշվառվող էլեկտրաէներգիայի քանակի հսկողության նպատակով իրավունք ունի տեղակայել առևտրայ հաշվառքի սարքի հարաչափերին համապատասխան վերստուգիչ հաշվառքի սարք, որի տվյալները ևս նշվում են Պայմանագ

(35-րդ կետը խմբ. 22.08.12 N 334-Ն, 08.10.14 N 379-Ն)

36. (կետն ուժը կորցրել է 22.08.12 N 334-Ն)

37. Առևտրային հաշվառքի սարքերը, այդ թվում առևտրային հաշվիչների սեղմակաշարերը պետք է կնքվեն մատակարա Սպառողն իրավունք ունի լրացուցիչ կնքել առևտրային, իսկ մատակարարը վերստուգիչ հաշվառքի սարքերը, այդ թվում՝ հա սեղմակաշարերը:

(37-րդ կետը խմբ. 08.10.14 N 379-Ն)

38. (կետն ուժը կորցրել է 08.10.14 N 379-Ն)

39. Առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ.

ա) բացառվի նրանց մեխանիկական վնասվածքների կամ միջավայրի անթույլատրելի ազդեցության հնարավորությունը.

բ) բացառվի կողմնակի անձանց միջամտությունը հաշվառքի սարքերի միացման սխեմային և նրանց աշխատանքին,

գ) ապահովվի սպառողի և մատակարարի ներկայացուցչի համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը,

դ) ապահովվի հաշվառքի սարքերի պահպանումը,

ե) վտանգ չսպառնա մարդկանց կյանքին և առողջությանը:

(39-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

40. Բնակչության առևտրային հաշվիչները տեղակայվում են ընդհանուր կամ անհատական արկղերում: Բազմաբնակար 2 ենթերում առևտրային հաշվիչները տեղակայվում են յուրաքանչյուր մուտքի ընդհանուր արկղերում:

Արկղերի տեղակայման վայրը ընտրվում է այնպես, որ ապահովվի էլեկտրական լարման սահմանված մեծությունը սպառ ընդունման վահանակի վրա: Առևտրային հաշվառքի սարքերի համար նախատեսված արկղերը ենթակա են կողպման մատակողմից: Եթե սպառողի առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքը տեղակայված է անհատական արկղում, ապա սպառողունի կնքել արկղը:

(40-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 8

Մ Պ Ա Ռ Ա Ս Է Լ Է Կ Տ Ր Ա Է Լ Ե Ր Գ Ի Ա Յ Ի Ք Ա Ն Ա Կ ՈՒ Թ Յ Ա Ն Հ Ա Շ Վ Ա Ր Կ Մ Ա Ն Կ Ա Ր Գ Ը

41. Սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային ամսում սպառողի առևտրային հաշվիչի գրուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը հաշվիչի գործակցով (հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորանսֆորմացիայի գարծակիցների արտադրյալ) բազմապատկելու միջոցով: Եթե առևտրային հաշվիչն ամիջապես գրանցող էլեկտրաէներգիայի քանակը, որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրաէներգիայի այդ քանակության հաշվառքի սարքը տեղադրված է սահմանազատման կետից դուրս, ապա առևտրային հաշվառքի սարքով հաշվ էլեկտրաէներգիայի քանակին գումարվում կամ այդ քանակից հանվում է առևտրային հաշվառքի սարքի տեղադրման և սահմանազատման կետերի միջև էլեկտրատեղակայանքներում առաջացած էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստն մեծությունը, որը հաշվարկվում է Պայմանագրով սահմանված կարգով: Եթե սպառողի էլեկտրատեղակայանքներին միացված ենթասպառողներ, ապա հաշվարկվում է միայն սպառողի բեռին համապատասխանող տեխնոլոգիական կորուստը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով համաձայն սույն կանոնների 12-րդ գլխի պահանջների:

(41-րդ կետը լրաց. 16.10.07 N 421-Ն, 09.12.15 N 409-Ն)

42. 0,4 կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար, երբ նվազագույն բեռնվածքի ռեժիմնե տեխնիկայապես անհնար է առևտրային հաշվառքի սարքերի բնականոն աշխատանքը, սպառված էլեկտրաէներգիայի քանակը հաշվարկվում է նվազագույն բեռնվածքի ամբողջ ժամանակահատվածում փաստացի միացված էլեկտրական ընդունիչների հ հիման վրա և ավելացվում առևտրային (վերստուգիչ) հաշվիչի ցուցմունքով հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը: Նվազագույն բեռնվածքի ժամանակահատվածի տևողությունը և այդ ժամանակահատվածում միացված գումարային բեռնված մեծությունները, դրանց հաշվարկի կարգի հետ միասին, հավելվում են Պայմանագրին և վերանայվում յուրաքանչյուր տարի է կողմերից մեկի գրավոր պահանջով տարվա ընթացքում՝ նվազագույն բեռնվածքի փոփոխման դեպքում:

(42-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն, փոփ., լրաց. 09.12.15 N 409-Ն)

43. Առևտրային (վերստուգիչ) հաշվիչի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ սովյալ հաշվարկային ամսվան հաջորդող առաջին երեք օրերի ընթացքում: Սպառված էլեկտրաէներգիան բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչով (այսուհետ էլեկտրոնային հաշվիչ) հաշվառելու դեպքում մատակարարը առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի փոխա գրանցում է ավտոմատացված ռեժիմում առևտրային հաշվիչի լուսատախտակի վրա արտածվող՝ սպառողի նախորդ հաշվա ամսվա ծախսը (ըստ սակագների): Այն դեպքերում, երբ առևտրային (վերստուգիչ) հաշվիչը ներառված է էլեկտրական էներգի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում, մատակարարը կարող է հաշվիչի գրանցված ողջ տեղեկատվի հավաքագրել ավտոմատացված համակարգի միջոցով: Մատակարարը պարտավոր է տարին առվազն մեկ անգամ ստուգել և էլեկտրոնային առևտրային հաշվիչների ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները:

(43-րդ կետը խմբ. 08.10.14 N 379-Ն, լրաց. 09.11.16 N 303-Ն)

43.1 Սպառված էլեկտրաէներգիան էլեկտրոնային առևտրային հաշվիչով հաշվառելու դեպքում, երբ այն ավտոմատացվ ռեժիմում իր լուսատախտակի վրա հաշվարկային ամսվան հաջորդող ողջ ամսվա ընթացքում չի արտածում սպառողի նախա հաշվարկային ամսվա ծախսը (ըստ սակագների) կամ ճշգրիտ չի արտացոլում ցերեկային և գիշերային սպառման ժամանակահատվածը, ապա սպառողը գրավոր դիմում է մատակարարին թերությունը շտկելու պահանջով: Սպառողի դիմա ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը պարտավոր է անվճար շտկել թերությունը կամ անվ փոխարինել էլեկտրոնային առևտրային հաշվիչը՝ տեղակայելով այլ, առնվազն համարժեք, էլեկտրոնային հաշվիչ և դրա տվ ամրագրել Պայմանագրում:

(43.1-ին կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

43.2 Մատակարարը պարտավոր է սպառողի (բացառությամբ բնակչության) առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել և ներկայացուցչի մասնակցությամբ, եթե վերջինս ներկայացրել է նման պահանջ: Այդ դեպքում մատակարարը պարտավոր է տ հաշվիչի ցուցմունքը գրանցել սպառողի հետ համատեղ՝ սույն կանոնների 43-րդ կետով սահմանված և սպառողի հետ փոխհամաձայնեցված ժամկետում: Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի սարքի ցուցմունքը գրանցել առանց ներկայացուցչի, եթե վերջինս փոխհամաձայնեցված ժամկետում չի ներկայացրել ցուցմունքների գրանցմանը:

(43.2-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

43.3 Եթե 6(10)կՎ և բարձր լարման սպառողի սպառած էլեկտրաէներգիայի հաշվառումը կատարվում է էլեկտրոնային հորն իր հերթին ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում (այսուհետ ավտոմատացված համակարգ), ապա վերջինիս գրավոր դիմումի դեպքում, դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 20 աշխատանքային օրացքում մատակարարը պարտավոր է ավտոմատացված համակարգի հիշողության մուտքի իրավունք տրամադրել տվյալ վերաբերող մասով՝ մշտադիտարկման նպատակով: Ավտոմատացված համակարգի հիշողությանը մուտքի իրավունքի տրամադրումը սպառողը մատակարարին վճարում է յուրաքանչյուր հաշվիչի համար 5000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հաճախումը): **(43.3-րդ կետը լրաց. 09.12.15 N 409-Ն)**

44. Բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման էլեկտրատեղակայանքների էլեկտրամատակարարման համար պայմանագրային կողմ հանդես է գալիս բազմաբնակարան շենքի կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի սեփականատերերի կողմից լիազորված անձը:

Գ Լ ՈՒ Խ 9

ՍՊԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՒԵՆԵՐԳԻԱՅԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԿԱՅԻ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է տվյալ լարման մակարդակի և ժամային տիրույթների համար (եթե առևտրային հաշվառքի սարքն ունի նման տարանջատված հաշվառման հնարավորություն) Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրաէներգիայի քանակությունների արտադրյալների գումարով:

46. Մատակարարը պարտավոր է.

ա) մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, փոստային բաժանմունքների համապատասխան սպասարկման կետերում տեղադրել տեղեկատվություն՝ նախորդ ամսվա ընթացքում սպառողների կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

բ) մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, հանրապետական սփյուռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով 2 անգամ 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում հայտարարել նախորդ ամսվա ընթացքում սպառողն սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղադրելու օրը:

գ) սպառողի դիմելու դեպքում տրամադրել վերջինիս նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի քանակ արժեքի մասին տեղեկատվությունը՝ սույն կետի ա) ենթակետում նշված կետերում, ինչպես նաև սույն կանոնների 74-րդ կետի նախատեսված շուրջօրյա հեռախոսային ծառայության միջոցով:

դ) նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողին ներկայացվող հաշվարկային փաստաթուղթը պահովել հետևյալ տեղեկատվության առկայությունը. սպառողի անունը, անվանումը, ազգանունը, գտնվելու (բնակության) քարտի համարը, հաշվարկային ամիսը, էլեկտրական էներգիայի ցերեկային և գիշերային սակագները, առևտրային հաշվիչի վերջին ցուցմունքները (իսկ էլեկտրոնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով էլեկտրաէներգիայի և ցուցմունքը), առևտրային հաշվիչի նախորդ և վերջին ցուցմունքների գրանցման օրը, հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակը (արտահայտված կիլովատտ ժամերով, իսկ էլեկտրոնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով սպառված էլեկտրաէներգիայի քանակը) և արժեքը (արտահայտված Հայաստանի Հանրապետության Էներառյալ ավելացված արժեքի հարկը), նախորդ տարվա նույն ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակը (արտահայտված կիլովատտ ժամերով, իսկ էլեկտրոնային հաշվիչի առկայության դեպքում՝ նաև գիշերային սակագնով սպառված էլեկտրաէներգիայի քանակը), պարտքի մնացորդը հաշվարկային ամսվա սկզբին և վերջին (արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներում արժեքի հարկը) և վճարման ամսաթիվը:

ե) սպառողի գրավոր դիմումի դեպքում, դիմումը ստանալուն հաջորդող հաշվարկային ամսվանից սկսած՝ յուրաքանչյուր սույն կետի «ա» ենթակետում սահմանված ժամկետում, վերջինիս նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոն փոստով) ծանուցել նախորդ հաշվարկային ամսում սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքը օգտագործված բոլոր ցուցանիշների մասին: Ծանուցումը փոստով առաքելու համար վճարում է սպառողը, իսկ էլեկտրոնային իրականացվում է անվճար: Փոստային առաքման վճարը ներառվում է հաշվարկային փաստաթղթում առանձին տողով և ենթավճարման մատակարարված էլեկտրաէներգիայի արժեքի հետ միասին, ընդ որում, մատակարարը սպառողի կատարած վճար առաջնահերթ մարում է փոստային առաքման արժեքը, հետո միայն սպառված էլեկտրաէներգիայի արժեքը:

զ) իր վեր-կայքի միջոցով հնարավորություն ընձեռել սպառողին՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալ սույն կետի ենթակետում նշված՝ առնվազն վերջին մեկ տարվա տեղեկատվությանը:

(46-րդ կետը լրաց. 04.08.10 N 406-Ն, փոփ. 21.03.12 N 78-Ն, փոփ., խմբ., լրաց. 08.10.14 N 379-Ն, փոփ. N 409-Ն, լրաց., փոփ. 25.10.17 N 452-Ն, լրաց. 24.10.18 N 393-Ն)

47. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի արժեքը պարտավոր է վճարել իր կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին սույն կանոնների 46-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկատվություն հետո 7 օրվա ընթացքում:

48. Վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառող էլեկտրամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ սպառողին հասու այլ ձևերով (հայտարարությամբ) փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ

կատարվի հանրապետական սիմոնյան առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով 2 անգամ, 18:00-ից 20:00-ն և 20:00-ից շքնկառ ժամանակահատվածներում: Ընդ որում, եթե սպառողը սույն կանոնների 46-րդ կետի համաձայն պահանջել է հաշվա հաշվիվը իրեն ներկայացնել գրավոր կամ էլեկտրոնային փոստով, ապա վերջինս պետք է զգուշացվի գրավոր կամ էլեկտրոնայ փոստով: Զգուշացման վերաբերյալ գրությունը փոստով առաքելու պահանջի դեպքում՝ այդ ծառայության համար վճարում է սպառողը: Զգուշացումը էլեկտրոնային փոստով կատարվում է անվճար:

(48-րդ կետը փոփ. 21.03.12 N 78-Ն, 08.10.14 N 379-Ն, 09.12.15 N 409-Ն, փոփ. 25.10.17 N 452-Ն)

49. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարը իրավունք ունի.

ա) սահմանափակել սպառողի էլեկտրամատակարարումը մինչև պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգի հզորությունը՝ առնվազն 3 աշխատանքային օր առաջ Պայմանագրով սահմանված կարգով նրան զգուշացնելուց հետո.

բ) վթարային կամ տեխնոլոգիական հզորությունների ապահովման վերաբերյալ Պայմանագրում նշված ժամկետներում չ դեպքում դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ ժամկետների լրանալուց հետո, առնվազն 3 աշխատանքային օր Պայմանագրով սահմանված կարգով նրան կրկին զգուշացնելուց հետո:

(49-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն)

50. Մատակարարը սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտում դեպքում իրավունք ունի նաև.

ա) ուշացրած յուրաքանչյուր օրվա համար պայմանագրով սահմանված չարվով հաշվարկել տույժ, բայց ոչ ավելի, քան օր չվճարված գումարի 0,1 %-ը: Հաշվարկված տույժը չի կարող գերազանցել պարտքի ընդհանուր գումարի 10 %-ը: Մատակարար է նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի արժեքի չվճարված գումարի նկատմամբ սկսել տույժի հաշվար հաջորդող ամսվա 20-ից, եթե դրանից առնվազն 7 օր առաջ սույն կանոնների 46-րդ կետով սահմանված կարգով տեղեկացրե սպառողին նրա կողմից սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի մասին: Հակառակ դեպքում տույժը հաշվարկվում վճարման համար հատկացված ժամկետի ավարտից հետո.

բ) խախտմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում տվյալ խախտումը կրկնվելու դեպքում վերջին խախտմանը հաջորդ ամիսների ընթացքում պահանջել վճարել կանխավճար կամ ներկայացնել իր համար ընդունելի վճարման այլ երաշխիք, որի մեծությունը չպետք է գերազանցի սպառողի նախորդ տարում օգտագործած էլեկտրաէներգիայի ծախս ունեցած ամիսների մ ամսական արժեքի 50 տոկոսը:

Եթե սպառողը նման դեպքում հրաժարվում է կանխավճար տալուց կամ մատակարարի համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ ներկայացնելուց, ապա մատակարարն իրավունք ունի նաև սպառողին առնվազն 3 աշխատանքային օր առաջ և կամ հեռախոսագրով զգուշացնելուց հետո դադարեցնել նրա էլեկտրամատակարարումը, եթե նա չունի ամրագրված պայման վթարային կամ տեխնոլոգիական հզորություն: Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վթարային կամ տեխնոլոգի հզորություն, ապա մատակարարը նրա էլեկտրամատակարարումը կարող է դադարեցնել միայն սույն կանոնների 49-րդ կետ նախատեսված ընթացակարգերն ապահովելուց հետո:

(50-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն, խմբ. 09.12.15 N 409-Ն)

50.1 Սույն Կանոնների 50-րդ կետի «ա» ենթակետի և 59.2 կետի համաձայն տույժ հաշվարկելու դեպքում մատակարարը կատարած վճարումներից առաջնահերթ մարում է սպառված էլեկտրաէներգիայի արժեքը՝ ըստ դրա վճարման համար սահմ ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի գծով պարտավորությունները: Չի թույլատրվում հաշվարկված տ գումարի նկատմամբ կրկին տույժ հաշվարկել:

(50.1-ին կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

51. Պարտքի առկայության դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի սպառողի էլեկտրամատակարարումը, եթե սպ ներկայացրել է մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժաման Սույն կետը չի սահմանափակում մատակարարի իրավունքը պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում սպա էլեկտրամատակարարումը դադարեցնելու համար՝ ապահովելով սույն գլխով սահմանված՝ տվյալ սպառողի էլեկտամատակ դադարեցման ընթացակարգերը:

(51-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 10

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԽԱՆՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՆՎԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

52. Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում, երբ մատակարար դադարեցրել է սպառողի էլեկտրամատակարարումը, այն պարտավոր է վերականգնել ոչ ուշ, քան.

1) նույն օրը՝ մինչև ժամը 18:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել աշխատանքային օրերին մինչև ժամը 14:00-ն, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը,

2) հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել աշխատանքային օրերին՝ ժամը 14:00-ից հետո, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստաց հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը,

3) պարտքի մարման մասին տեղեկանալու պահից 24 ժամվա ընթացքում, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել ոչ աշխատանքային օրերին կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրից ստացել է հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

(գլուխը խմբ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 11

**ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՄԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ԿԱՐԳԸ
(վերնագիրը փոփ. 25.10.17 N 452-Ն)**

53. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում, սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին գրավոր ծանուցում է մյուս կողմին: Ծանուցումն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում կողմն անհամաձայնության մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները համապատասխան հիմնավորումներով:

(53-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

54. Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում մատակարարը սխալ հաշվարկված էլեկտրալ արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում) հաջորդ հաշվարկային ամսում սպառողին ներկայացվող հաշվարկ փաստաթղթում:

(54-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

55. Հաշվարկային փաստաթղթի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի սպա էլեկտրամատակարարումը, եթե վերջինս վճարել է մատակարարված էլեկտրաէներգիայի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Սպառողը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված էլեկտրաէներգիայի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորապես գրավոր ներկայացնելով մատակարարին:

(55-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

(գլուխը խմբ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 12

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ԽԱՆՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅ
ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

56. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում մատակարարը կատարում է սպառված էլեկտրաէներգիայի քան արժեքի վերահաշվարկ:

57. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում առևտրային հաշվառքի սարքի վերականգնման հետ կապված բոլոր ծախսերն իրականացնում է մատակարարը՝ անկախ առևտրային հաշվառքի սարքի պատկանելությունից, բացառությամբ առևտրային հաշվառքի 19-րդ կետով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստվել է, որ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է սպառողի գործողությամբ: Նման դեպքերում սպառողը պարտավոր է հատուցել մատակարարի կողմից առևտրային հաշվառքի վերականգնման հետ կապված բոլոր ծախսերը:

(57-րդ կետը լրաց. 25.10.17 N 452-Ն)

58. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ խախտումը պայմանավորված չէ լարման կամ հոսանքի չափերի անսովորաբար բարձրացման հետ, առևտրային հաշվառքի սարքի վերականգնման հետ կապված բոլոր ծախսերն իրականացնում է մատակարարը:

1) սույն Գլուխի 35-րդ կետի համաձայն առկա է վերստուգիչ հաշվառքի սարք, սպա սպառված էլեկտրաէներգիայի չափը վերահաշվարկը կատարվում է համաձայն վերստուգիչ հաշվառքի սարքի ցուցմունքի՝ առևտրային հաշվառքի սարքի սպառված էլեկտրաէներգիայի քանակը հաշվարկվում է համաձայն վերստուգիչ հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման օրն ընկած ժամանակահատվածի համար: Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{էԲ} = ZV_{էԲ} + SԿ - ZU_{էԲ} ,$$

որտեղ՝

$V_{էԲ}$ -ն առևտրային հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածի համար վերահաշվարկված էլեկտրաէներգիայի չափը (կՎտժ),

$ZV_{էԲ}$ -ն վերստուգիչ հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի սպառված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ),

$SԿ$ - վերստուգիչ հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի սպառված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ),

$ZU_{էԲ}$ -ն առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի սպառված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ), իսկ ենթասպառված էլեկտրաէներգիայի քանակը՝ սպառողին վերագրված մասն է (կՎտժ):

Սույն կետում սահմանված ՀՎ_{էք}, ՏԿ և ՀՍ_{էք} մեծությունները հաշվարկվում են սույն Կանոնների 41-րդ կետի համաձայն.

2) առկա չէ վերստուգիչ հաշվառքի սարք, սակայն սպառված էլեկտրաէներգիայի քանակը հաշվառվում է էլեկտրոնային միջոցով, ապա վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությունը որոշվում է՝ օգտագործելով էլեկտրոնային հաշվիչի հիշողությունից արտածված տվյալները: Վերահաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Վ}_{էք} = (\text{Յ}_{\text{Ա}} - \text{Յ}_{\text{Վ}}) \text{Գ}_{\text{ն1}} - \text{ՀՍ}_{էք},$$

որտեղ՝

Յ_Ա-ն - էլեկտրոնային հաշվիչի հիշողությունից արտածված՝ առևտրային հաշվառքի սարքի ապահովաբազային օրվա ց է, որն ամրագրվում է առևտրային հաշվառքի սարքի Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ,

Յ_Վ-ն - առևտրային հաշվառքի սարքի գրանցված նախավերջին ցուցմունքն է, որը որոշվում է սույն Կանոնների 43-րդ կետի համաձայն,

Գ_{ն1} - հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների առկայության դեպքում՝ դրանց տրանսֆորմացիայի գործակիցն՝ արտադրյալն է, որը, դրանց բացակայության դեպքում, ընդունվում է հավասար 1-ի.

2.1) առկա չէ վերստուգիչ հաշվառքի սարք, առևտրային հաշվիչի ստուգաչափման արդյունքում հնարավոր չի եղել արտա էլեկտրոնային հաշվիչի հիշողության տվյալները, սակայն սպառողին ամրակցված առևտրային հաշվիչը ներառված է էլեկտր էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում և սպառողին մշտադիտարկման նպատակով տրվե ավտոմատացված համակարգի հիշողության մուտքի իրավունք կամ սպառողը օրենքով սահմանված կարգով իրազեկվել է այ իրավունքի վերաբերյալ, ապա վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Վ}_{էք} = (\text{Տ}_{\text{օր1}} * \text{Մ}_{\text{օծ1}} + \text{Տ}_{\text{օր2}} * \text{Մ}_{\text{օծ2}}) - \text{ՀՍ}_{էք1},$$

որտեղ՝

Տ_{օր1}-ը առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածում աշխատանքային օրերի թիվն է,

Մ_{օծ1}-ը առևտրային հաշվիչի խախտմանը նախորդող 5 աշխատանքային օրերի միջին օրական ծախսն է,

Տ_{օր2}-ը առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածում ոչ աշխատանքային օրերի թիվն է,

Մ_{օծ2}-ը առևտրային հաշվիչի խախտմանը նախորդող 2 ոչ աշխատանքային օրերի միջին օրական ծախսն է,

ՀՍ_{էք1}-ն հաշվառքի սարքի խախտման ժամանակահատվածում առևտրային հաշվիչի ցուցմունքներով գրանցված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտ·ժ), իսկ ենթասպառողների առկայության դեպքում՝ հաշվառված էլեկտրաէներգիայի քա սպառողին վերագրված մասն է:

Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակը դրական արժեքի դեպքում գումարվում, իսկ բացասական արժեքի դեպք հանվում է հաշվիչով գրանցված էլեկտրաէներգիայի քանակից: Առևտրային հաշվիչի խախտման ժամանակահատվածը՝ 20 Կ գերազանցելու դեպքում վերահաշվարկն իրականացվում է խախտման հայտնաբերման օրվանից 20 օրվա համար.

3) երբ առկա չէ վերստուգիչ հաշվառքի սարք, առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում հնարավոր չլ արտածել էլեկտրոնային հաշվիչի հիշողության տվյալները, առևտրային հաշվիչը ներառված չէ էլեկտրական էներգիայի հաշ վերահսկման ավտոմատացված համակարգում, սակայն Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հնար եղել որոշել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի սխալանքի տոկոսը, ապա վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևերով՝

$$\text{ՀՍ}_{էք2} \cdot \text{Մ}\%_2$$

$$\text{Վ}_{էք} = \frac{\text{ՀՍ}_{էք2} \cdot \text{Մ}\%_2}{100\%}$$

երբ առևտրային հաշվիչը դանդաղ է աշխատել, քան իր սխալանքի թույլատրելի տիրույթն է և

$$\text{ՀՍ}_{էք2} \cdot \text{Մ}\%_2$$

$$\text{Վ}_{էք} = -\left(\frac{\text{ՀՍ}_{էք2} \cdot \text{Մ}\%_2}{100\% + \text{Մ}\%_2} \right),$$

երբ առևտրային հաշվիչն արագ է աշխատել, քան իր սխալանքի թույլատրելի տիրույթն է,

որտեղ՝

ՀՍ_{էք2}-ն առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման պահից մինչև առևտրային հաշվառքի սարքի

ապահավաքակցման օրը առևտրային հաշվառքի սարքով հաշվառված էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ)։

U%-ն Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության մեջ նշված առևտրային հաշվիչի չափման սխալանք թույլատրելի տիրույթը գերազանցող տոկոսային այն մեծությունն է, որն առավելագույնս բնութագրում է խախտման հայտնա նախորդող ամսում սպառողի սպառման համակարգի հզորության գործակցի (cos φ) և հոսանքային բեռի մեծությունը։

4) առկա չէ վերստուգիչ հաշվառքի սարք, առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում հնարավոր չի եղ արտաձեղ էլեկտրոնային հաշվիչի հիշողության տվյալները, առևտրային հաշվիչը ներառված չէ էլեկտրական էներգիայի հաշ վերահսկման ավտոմատացված համակարգում, մինչև ժամանակ Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացույ արձանագրվել է փորձաքննության ենթակա չլինելու հանգամանքը կամ հնարավոր չի եղել որոշել առևտրային հաշվառքի սա աշխատանքի սխալանքի տոկոսը, ապա վերահաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով։

$$\varphi_{t,p} = U_{S_{op}} \cdot \sqrt{U_{\infty}} - \sum U_{t,p}$$

որտեղ՝

U_∞-ն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը նախորդող տարվա նույն ամսվա միջին օրական ծախսը բազմապատկած խախտմանը նախորդող երեք ամիսների ծախսի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսի քա Եթե խախտմանը նախորդող երեք ամիսներին և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի որևէ ամսում սպառողը ծախս ապա U_∞-ն ընդունվում է հավասար առևտրային հաշվառքի սարքի խախտմանը նախորդող տարվա նույն ամսվա միջին օր ծախսին։ Եթե նախորդ տարվա նույն ամսվա ընթացքում սպառողը ծախս չի ունեցել, ապա միջին օրական ծախսն ընդունվու հավասար առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա սպառողի միջին օրա ծախսին,

U_{S_{op}}-ը առևտրային հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սար ասպահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 60 օրը գերազանցելու դեպքում ընդու հավասար 60-ի, ինչը սակայն չի սահմանափակում մատակարարի իրավունքը համապատասխան հիմնավորումների առկայո դեպքում կիրառել ավելի կարճ ժամկետ։

(58-րդ կետը փոփ. 09.12.15 N 409-Ն, լրաց., խմբ. 09.11.16 N 303-Ն, 25.10.17 N 452-Ն, խմբ. 24.10.18 N

59. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ խախտումը պայմանավորված է լարման կամ հոսանքի չալ տրանսֆորմատորների խափանմամբ և առկա է վերստուգիչ հաշվառքի սարք, ապա վերահաշվարկն իրականացվում է սույն Կանոնների 58-րդ կետի 1)-ին ենթակետի համաձայն։ Վերստուգիչ հաշվառքի սարքի բացակայության դեպքում, երբ առևտր ասպահավաքակցման օրը հաշվառքի սարքի նախավերջին ցուցմունքի գրանցման օրվանից մինչև առևտրային հաշվառքի սար ասպահավաքակցման օրն ընկած ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով, որը 60 օրը գերազանցելու դեպքում ընդու հավասար 60-ի, ինչը սակայն չի սահմանափակում մատակարարի իրավունքը համապատասխան հիմնավորումների առկայո դեպքում կիրառել ավելի կարճ ժամկետ։

1) լարման տրանսֆորմատորի խափանման պատճառով սխալ է գրանցել սպառված էլեկտրաէներգիայի քանակը, սակա սպառողին ամրակցված առևտրային հաշվիչը ներառված է էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատ համակարգում և սպառողին մշտադիտարկման նպատակով տրվել է ավտոմատացված համակարգի հիշողության մուտքի իլ կամ սպառողը օրենքով սահմանված կարգով իրազեկվել է այդ իրավունքի վերաբերյալ, ապա վերահաշվարկը կատարվում է Կանոնների 58-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն։ Այն դեպքերում, երբ առևտրային հաշվիչը ներառված չէ էլեկտրական էն հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում՝ վերահաշվարկը կատարվում է Կանոնների 58-րդ կետի 4-րդ 1 համաձայն։

2) հոսանքի տրանսֆորմատորների խափանման պատճառով սխալ է գրանցել սպառված էլեկտրաէներգիայի քանակը, ա յուրաքանչյուր հոսանքի չափիչ տրանսֆորմատորի համար կատարվում է վերահաշվարկ հետևյալ բանաձևերով՝

$$\varphi_{t,p} = \frac{\sum U_{t,p} \cdot U\%_{2S}}{n \cdot 100\%}$$

երբ հոսանքի տրանսֆորմատորի սխալանքը դուրս է բացասական թույլատրելի տիրույթից,

$$\varphi_{t,p} = - \left(\frac{\sum U_{t,p} \cdot U\%_{2S}}{n \cdot 100\% + U\%_{2S}} \right),$$

երբ հոսանքի տրանսֆորմատորի սխալանքը դուրս է դրական թույլատրելի տիրույթից, որտեղ՝

U%_{ZS}-ն Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության մեջ նշված առևտրային հաշվառքի սարքի հոսանքի տրանսֆորմատորի սխալանքի թույլատրելի տիրույթը գերազանցող տոկոսային մեծությունն է, որն առավելագույնս բնութագրվում է խախտման հայտնաբերմանը նախորդող ամսվա հոսանքային բեռի մեծությունը,

n-ը հաշվառման մեջ ներառված հոսանքի տրանսֆորմատորների քանակն է:

Վերահաշվարկված էլեկտրաէներգիայի գումարային քանակությունն ընդունվում է հավասար հոսանքի բոլոր տրանսֆորմատոր կատարված վերահաշվարկների գումարին:

(59-րդ կետը խմբ. 09.11.16 N 303-Ն, 25.10.17 N 452-Ն, լրաց. 24.10.18 N 393-Ն)

59.1. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքը որոշվում է վերահաշվարկված էլեկտրաէներգիայի՝ տարանջատված ըստ ցերեկային ու գիշերային քանակների և առևտրային հաշվառքի խախտման հայտնաբերման ամսվա համապատասխան սակագնի արտադրյալով:

(59.1-ին կետը խմբ. 24.10.18 N 393-Ն)

59.2 Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ մատակարարը հիմնավոր փաստարկներ ունի, որ խախտում պայմանավորված է սպառողի գործողություններով (ներառյալ, սակայն չսահմանափակելով դեպքերը, երբ առևտրային հաշվառքի կնիքները պոկված, կեղծված կամ վնասված են, կամ առկա է այլ ներգործություն առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի մատակարարն իրավունք ունի սպառողից պահանջել վճարելու տույժ՝ վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքի հնգապատկան: Սպառողի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար սպառողին ներկայացվող հաշվարկի փաստաթղթում: Սպառողի կողմից մատակարարի՝ տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վե է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարման վեճի վերջնական լուծումը:

(59.2-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

59.3 Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ սպառողը հիմնավոր փաստարկներ ունի, որ խախտումը պայմանավորված է մատակարարի գործողություններով (ներառյալ, սակայն չսահմանափակելով դեպքերը, երբ առևտրային հաշվառքի կնիքները պոկված, կեղծված կամ վնասված են, կամ առկա է այլ ներգործություն առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի մատակարարն իրավունք ունի մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքի հնգապատկան: Մատակարարի կողմից սպառողի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար սպառողին ներկայացվող հաշվարկի փաստաթղթում: Մատակարարի կողմից սպառողի՝ տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում սպառողը վեճը լուծում է դատական կարգով:

(59.3-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

59.4 Մատակարարը պարտավոր է վերահաշվարկին առնչվող ողջ տեղեկատվությունը գրավոր ներկայացնել սպառողին՝ առևտրային հաշվառքի սարքի ապահովման արտադրողից ոչ ուշ քան 35 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ այն երբ վերահաշվարկը կատարվել է Կանոնների 58-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն և միջին օրական ծախսը որոշվել է առևտրային հաշվառքի սարքի վերականգնմանը հաջորդող առաջին ծախս ունեցած ամսվա համար: Նման դեպքերում մատակարարը պարտավոր է վերահաշվարկին վերաբերող ողջ տեղեկատվությունը գրավոր ներկայացնել սպառողին՝ առևտրային հաշվառքի սարքի ապահովման արտադրողից ոչ ուշ քան 60 աշխատանքային օրվա ընթացքում: Սպառողն իրավունք ունի չհամաձայնել վերահաշվարկի արդյունքին: Եթե սպառողը չի համաձայնում վերահաշվարկի արդյունքին, ապա մատակարարի կողմից էլեկտրաէներգիայի վերահաշվարկին առնչվող տեղեկատվությունն ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին է ներկայացնում վերջինիս կատարած վերահաշվարկի հետ կապված իր գրավոր առարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով: Եթե սպառողը 7 աշխատանքային օրվա ընթացքում վերահաշվարկի արդյունքի մասին մատակարարին առարկություններ չի ներկայացնում, ապա մատակարարը վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում է) վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա ընթացքում սպառողին ներկայացվող փաստաթղթում:

(59.4-րդ կետը փոփ., խմբ. 25.10.17 N 452-Ն)

59.5 Սպառողից վերահաշվարկի արդյունքների վերաբերյալ առարկություններ ստանալու դեպքում մատակարարը պարտավոր է դրանք ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում քննարկել և արդյունքների մասին գրավոր տեղեկացնել սպառողին: Սպառողը պարզաբանելով վերահաշվարկի արդյունքների հետ կապված վիճելի դրույթները և դրանց հիմքերը: Մատակարարն իր կատարած վերահաշվարկում անճշտություններ հայտնաբերելու դեպքում պարտավոր է ճշգրտել վերահաշվարկված էլեկտրաէներգիայի ծախսը: Մատակարարի և սպառողի միջև վերահաշվարկի արդյունքների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում սպառողը վերականգնում է կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա ընթացքում վճարման ենթակա էլեկտրաէներգիայի արժեքի հետ վճարում է վերահաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքի՝ իր կողմից չվճարված մասի համար: Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝ մինչև վեճի վերջնական լուծումը:

59.5.1 Հանձնաժողովը, սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, առանձին դեպքերում՝ սպառողի և առանձնահատկություններով պայմանավորված, մատակարարի կամ Դիմող անձի դիմումի (կից հիմնավորումներով) հիման վրա կարող է ընդունել վերահաշվարկման վերաբերյալ անհատական որոշումներ:

(59.5.1-ին կետը լրաց. 09.11.16 N 303-Ն)

59.5.2 Բոլոր այն դեպքերում, երբ սույն կանոնների 64-րդ կետի համաձայն առևտրային հաշվառքի սարքի ապահավաքա արձանագրություն չի կազմվել, և սպառողը չի համաձայնել էլեկտրական էներգիայի վերահաշվարկված քանակի դիմաց վճա ենթակա գումարը վճարելու պահանջին, մատակարարը վեճը լուծում է դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով սպառողի էլեկտրամատակարարումը:

(59.5.2-րդ կետը լրաց. 24.10.18 N 393-Ն)

59.6 Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սույն գլխում ներկայացված ընթացակարգը չի սահմանափակու իրավունքը՝ վեճը դատական կարգով լուծելու կամ պահանջելու վնասի փոխհատուցում:

(գլուխը խմբ., փոփ. 27.04.11 N 200-Ն, խմբ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 13

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃՇՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ

60. Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգումը կարող է իրականացվել ինչպես սպառողի գրավի հիման վրա, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ: Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը որոշ Չափագիտական մարմնի կողմից հաստատված չափագիտական փորձաքննության եզրակացության հիման վրա՝ առևտրայի հաշվառքի սարքի հերթական կամ արտահերթ ստուգաչափման ընթացքում:

61. Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման և ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը դրանց պատկանելությունից, կատարվում են մատակարարի կողմից, բացառությամբ սույն Կանոնների 19-րդ, 65.2 և 65.3 կե նախատեսված դեպքերի:

62. Մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման, աշխատանքի ճշտության ստուգ ժամկետների մասին ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ գրավոր, հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցությւ միջոցներով ծանուցել սպառողին: Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքը ապահավաքակցել առանց ւ նախապես ծանուցելու, եթե հայտնաբերել է, որ սպառողն էլեկտրաէներգիան սպառում է առևտրային հաշվառքի սարքի ակն խախտմամբ կամ առևտրային հաշվառքի սարքի հետագա շահագործումը կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին, առու գույքին կամ շրջակա միջավայրին: Նման դեպքում մատակարարը առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման մաս սպառողին պարտավոր է սույն կետում նշված եղանակներով ծանուցել անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքու ներկայացնել առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները: Մատակարարը պարտավոր է ձեռն անհրաժեշտ բոլոր միջոցները մարդկանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգն վերացնելու նպատակով:

(62-րդ կետը փոփ. 09.12.15 N 409-Ն)

63. Սպառողն իրավունք ունի պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատ ներառյալ՝ դրա ապահավաքակցումը, աշխատանքի ճշտության ստուգումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայու նախապես փոխհամաձայնեցված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մատակարարի կողմից այդ մասին գրավոր, հեռախոսագ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ծանուցելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում սահմ ժամկետում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը, աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմ սպառողի չներկայանալու դեպքում այդ աշխատանքներն իրականացվում են նրա բացակայությամբ:

64. Մատակարարի կամ սպառողի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի փոխարինման, աշխ ճշտության ստուգման կամ ստուգաչափման նպատակով դրա ապահավաքակցման դեպքում մատակարարը՝

- 1) սույն Կանոնների 62-րդ կետով սահմանված կարգով տեղեկացնում է սպառողին.
- 2) կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, դրա ամբողջականության կամ վնասված լինելու մասին արձանագրություն (ակտ), որը ստորագրում են մատակարարը և սպառողը: Արձանագրության (ակտի) որևէ դրույթին սպառ անհամաձայնության դեպքում այդ մասին արձանագրությունում (ակտում) կատարվում է համապատասխան նշում՝ նկարա անհամաձայնության պատճառները: Արձանագրությունը (ակտը) կազմվում է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կու համար: Սպառողի չներկայանալու դեպքում մատակարարը արձանագրությանը (ակտին) կցում է սպառողին ծանուցելու մա գրությունը և արձանագրության (ակտի) մեջ կատարում համապատասխան նշում՝ սպառողի առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը չներկայանալու մասին.

3) տեղակայում է իր սեփականությունը հանդիսացող այլ առնվազն համարժեք առևտրային հաշվառքի սարք (բացառու սպառողի սեփականությունը հանդիսացող 6 կՎ և բարձր լարման հոսանքի ու լարման չափիչ տրանսֆորատորների), որի ս ամրագրվում են Պայմանագրում.

4) մասնակցում է Չափագիտական մարմնի կողմից իրականացվող առևտրային հաշվառքի սարքի չափագիտական փորձաքննությանը և դրա եզրակացության կազմմանը, որում ներառվում են տվյալներ հաշվառքի սարքի ամբողջականությս վնասված լինելու, առևտրային հաշվառքի սարքի փաստացի ցուցմունքների, ինչպես նաև աշխատանքի ճշտության ստուգմա արդյունքների մասին: Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում մատակարարը սույն ենթակետին համապատասի կազմված եզրակացությունը սույն կանոնների 59.4 կետով սահմանված ժամկետում, վերահաշվարկին առնչվող տեղեկատվու միասին, գրավոր ներկայացնում է սպառողին:

(64-րդ կետը խմբ. 19.06.19 N 214-Ն)

64.1 Կանոնների 64-րդ կետի 4-րդ ենթակետում նշված փորձաքննությունը չի իրականացվում, երբ հաշվառքի սարքի

ապահավաքակցումը պայմանավորված է Հանձնաժողովի հետ համաձայնեցված մատակարարի ներդրումային ծրագրերի շր իրականացվող հաշվառքի սարքերի փոխարինման աշխատանքներով: Սույն կետով սահմանված դեպքում ապահավաքակցվ հաշվիչները պահպանվում են մատակարարի մոտ առնվազն 3 ամիս՝ եթե սպառողը ներկա է եղել ապահավաքակցմանը և 6 սպառողի կողմից ապահավաքակցմանը չներկայանալու դեպքում: Նշված ժամանակահատվածում սպառողի դիմելու դեպքը առևտրային հաշվառքի սարքերը ենթակա են փորձաքննության՝ սույն կանոններով սահմանված կարգով:

(64.1-ին կետը լրաց. 19.06.19 N 214-Ն)

65. Սույն Կանոնների 64-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման դեպքում մատակար իրավունք ունի դադարեցնել ապառողի էլեկտրամատակարարումը ոչ ավելի, քան 1 ժամ տևողությամբ՝ առևտրային հաշվիչ փոխարինման, և ոչ ավելի, քան 3 ժամ՝ հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների փոխարինման անհրաժեշտության Եթե սպառողն ունի ամրագրված պայմանագրային վճարային կամ տեխնոլոգիական հզորություն, ապա մատակարարն առև հաշվառքի սարքը վերականգնելու նպատակով պարտավոր է սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման և վերակաժամկետները համաձայնեցնել վերջինիս հետ: Այս դեպքում սպառողը պարտավոր է մատակարարի գրավոր դիմումի հիման ստանալու պահից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս հնարավորություն ընձեռել փոխարինել առևտր հաշվառքի սարքը:

65.1 Մատակարարը պարտավոր է սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահավաքակցել առևտրային հ սարքը:

65.2 Սպառողը երկու տարի անընդմեջ մատակարարին մեկից ավելի անգամ առևտրային հաշվառքի սարքերի, այդ թվու և եռաֆազ հաշվիչների (էլեկտրոնային կամ ինդուկցիոն), հոսանքի և լարման չափիչ տրանսֆորմատորների աշխատանքի ճ ստուգման վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում պարտավոր է մատակարարին վճարել 1200 դրամ (ներառյալ՝ ավել արժեքի հարկը) կանխավճար: Եթե Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ հաստատվում է առևտրայ հաշվառքի սարքի խախտման փաստը, ապա մատակարարը կանխավճարը հաշվի է առնում սպառված էլեկտրաէներգիայի սպառողին ներկայացվող հաշվարկային փաստաթղթում: Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ առև հաշվառքի սարքի խախտումը չհաստատվելու դեպքում կանխավճարը դիտարկվում է որպես առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման համար մատակարարին վճարված ծառայության վճար և սպառողին չի վերադարձվում:

(65.2-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

65.3 Սույն գլխում ամրագրված դրույթները չեն սահմանափակում սպառողի իրավունքը՝ իր էլեկտրասպառման համակա ամրակցված առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգումը սեփական միջոցների հաշվին պատվիրե հաշվառքային սարքի աշխատանքի ճշտության ստուգման իրավունք ունեցող այլ կազմակերպությունների: Նման դեպքում մատակարարը պարտավոր է ապահովել սույն կետով սահմանված սպառողի իրավունքը, որն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1) մատակարարը սպառողի գրավոր դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում սպառողի հետ հաս ապահավաքակցում, փաթեթավորում և կնքված տեսքով սպառողին է հանձնում առևտրային հաշվառքի սարքը՝ այն ժամանակավորապես փոխարինելով այլ՝ առնվազն համարժեք առևտրային հաշվառքի սարքով, իսկ առևտրային հաշվառքի ապահավաքակցմանը սպառողի չներկայանալու դեպքում մատակարարը կազմում է սպառողի չներկայանալու մասին արձանագրություն: Այդ դեպքում առևտրային հաշվառքի սարքը չի ապահավաքակցվում.

2) սպառողը ոչ ուշ, քան ապահավաքակցմանը հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին է վերա ստուգաչափված և չափագիտական մարմնի կողմից վկայագրված (կնքված) առևտրային հաշվառքի սարքը և դրա փորձաքնն արդյունքների մասին իրավասու կազմակերպության գրավոր եզրակացությունը, որը պետք է հաստատված լինի Չափագիտա մարմնի կողմից: Այն դեպքում, երբ ներկայացված փորձաքննական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սա խախտում, մատակարարը պարտավոր է առաջնորդվել սույն կանոնների 12-րդ գլխով սահմանված կարգով: Սույն կետով նախատեսված դեպքում մատակարարն իրավունք ունի ներկա գտնվել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությ ստուգման, փորձաքննության և ստուգաչափման աշխատանքներին.

3) այն դեպքում, երբ մատակարարը ցանկություն է հայտնել մասնակցել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճ ստուգմանը կամ ստուգաչափմանը, սպառողը պարտավոր է առնվազն 3 աշխատանքային օր առաջ մատակարարին գրավոր թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել դրա իրականացման ժամկետների և վ մասին: Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման կամ ստուգաչափման ժամանակի և վայրի մաս վր պատշաճ ձևով տեղեկացված մատակարարի չներկայանալը այն չիրականացնելու հիմք չէ.

4) այն դեպքում, երբ սպառողը 20 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարին չի վերադարձնում առևտրային հա սարքը, ապա մատակարարն իրավունք ունի սպառողի նկատմամբ կիրառելու տույժ՝ վերջին մեկ տարվա ընթացքում առավե ծախս ունեցող ամսվա էլեկտրաէներգիայի արժեքի կրկնապատիկի չափով, իսկ այդ ժամանակահատվածում ծախս չունենալ դեպքում՝ դրան նախորդող տարվա առավելագույն ծախս ունեցած ամսվա էլեկտրաէներգիայի արժեքի կրկնապատիկի չափ Մինչև ժամանակ, մատակարարն իրավունք ունի սպառողից պահանջելու հասցված վնասի փոխհատուցում՝ ներառյալ առ հաշվառքի սարքի արժեքի, վերջինիս ապահավաքակցման հետ կապված և այլ ծախսերը:

(65.3-րդ կետը խմբ. 09.12.15 N 409-Ն)

65.4 Սույն Կանոնների 65.3 կետում սահմանված դեպքում, երբ մատակարարը ցանկություն է հայտնել մասնակցել առևտ հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմանը, սպառողը պարտավոր է առնվազն 3 աշխա օր առաջ մատակարարին գրավոր, հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ծանուցել դրա իրակ

Ժամկետների և վայրի մասին: Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմանը մատակարարի չներկայանալը այն չիրականացնելու հիմք չէ:

65.5 Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի ապահովագրակցումից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում սպառողին ներկայացնել Չափագիտական մ փորձագիտական եզրակացության պատճենը:

(65.5-րդ կետը լրաց. 24.10.18 N 393-Ն)

(գլուխը խմբ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 14

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

66. Առևտրային հաշվառքի սարքերը կարող են փոխարինվել ինչպես սպառողի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ:

67. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը մատակարարի նախաձեռնությամբ իրականացվում է նրա միջոցներ և ման դեպքում մատակարարը պարտավոր է ապահովել սույն Կանոնների 12-րդ գլխով ամրագրված ժամկետները:

(67-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն)

68. Սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը իրականացնում է մատակարարը՝ սպառողի դիմումի հիման վրա: Նման դեպքում սպառողը պարտավոր է մատակարարին վճարել կանխավճար սույն կանոնների 69-րդ սահմանված չափով, որի մարումը սկսվում է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից մեկ տարի հետո՝ սպառած էլեկտրաէներգիայի արժեքից այն նվազեցնելու միջոցով:

69. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումը սպառողի պահանջով իրականացվում է կանխավճարի հետևյալ չափ վճարման պայմանով.

ա) միաֆազ ինդուկցիոն հաշվիչը միաֆազ էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 10000 (տասը հազար) դրամ,

բ) եռաֆազ ինդուկցիոն հաշվիչը եռաֆազ էլեկտրոնային հաշվիչով փոխարինելու համար՝ 35 000 (երեսունհինգ հազար)

գ) «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և մատակարարի միջև փոխհոսքերի իրականացման նպատակով միաֆազ հաշվիչը դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային միաֆազ հաշվիչով փոխարինելու համար՝ 11 000 (տասնմեկ հազար) դրամ, իսկ եռաֆազ հաշվիչը դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային եռաֆազ հաշվիչով փոխարինելու համար՝ 55 000 (հիսունհինգ հազար) դրամ,

դ) 6 կվ և բարձր լարմամբ սնվող սպառողների հաշվիչը էլեկտրական ցանցի ավտոմատ հաշվառման համակարգին միա համար անհրաժեշտ հաշվառման համակարգով (ներառյալ կապի սարքավորումները, ծրագրային ապահովումը) փոխարինել 300 000 (երեք հարյուր հազար) դրամ:

(69-րդ կետը խմբ. 07.12.11 N 567-Ն, փոփ. 05.09.12 N 347-Ն, 08.10.14 N 379-Ն, լրաց. 09.11.16 N 303-Ն, 25.10.17 N 452-Ն)

70. Մատակարարը սպառողի դիմումը և կանխավճարի վճարումը հավաստող փաստաթուղթը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է փոխարինել նրա առևտրային հաշվառքի սարքերը:

(70-րդ կետը փոփ. 07.11.12 N 429-Ն, 08.10.14 N 379-Ն)

71. Առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից հետո մատակարարը պարտավոր է համապատասխան փոփոխութ կատարել Պայմանագրում և սպառված էլեկտրաէներգիայի արժեքը ընթացիկ ամսվան հաջորդող ամսվանից հաշվարկել սույ կանոնների 45-րդ կետի համաձայն:

(գլուխը փոփ. 07.11.12 N 429-Ն, 05.09.12 N 347-Ն, խմբ. 07.12.11 N 567-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 15

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ (ԴԻՄՈՂ ԱՆՁԱՆՅ) ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

72. Սպառողը կամ Դիմող անձը՝ մատակարարին կարող է դիմում (բողոք, հարցադրում) ներկայացնել գրավոր, բանավոր թվում՝ հեռախոսագանգի միջոցով) և էլեկտրոնային փոստի միջոցով, եթե սույն Կանոններով առանձին դեպքերի համար այլ սահմանված չէ:

73. Սպառողի կամ Դիմող անձի գրավոր դիմումին տրվում է գրավոր պատասխան, բանավոր դիմումին՝ բանավոր պատ իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին պատասխանը տրվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

74. Մատակարարը պարտավոր է ապահովել շուրջօրյա հեռախոսակապ, որպեսզի սպառողները կարողանան հաղորդել տեղեկատվություն կամ ստանալ պարզաբանումներ իրենց դիմումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման դադարեցումն պատճառների և վերականգնման ժամկետների, սպառված էլեկտրաէներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետն մատակարարի և սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:

75. Մատակարարը սպառողի կամ Դիմող անձի դիմումին պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից 10 աշխա օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար սույն Կանոններով այլ ժամկետ սահմանված չէ:

75.1. Մատակարարը սպառողի կամ Դիմող անձի դիմումի առնչությամբ Հանձնաժողովի հարցմանը պատասխանում է և ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ Հանձնաժողովի կողմից այլ ժամկետ նախատեսված չլինելու դեպք **(75.1-ին կետը լրաց. 24.10.18 N 393-Ն)**

76. Մատակարարը պարտավոր է սպառիչ պատասխան տալ դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դրա առնչությամբ օրենսդրական դաշտը, սպառողի կամ Դիմող անձի իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, անհրաժեշտ կլինեն վերջինիս՝ ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ: **(գլուխը խմբ. 08.10.14 N 379-Ն)**

Գ Լ ՈՒ Խ 16

ՄՍՏԱԿԱՐԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒՅԺԵՐԸ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ

77. Մատակարարը սպառողին (Դիմող անձին) վճարում է տույժ՝

- 1) էլեկտրամատակարարման պլանային ընդհատման համար սույն կանոնների 27-րդ կետում սահմանված ժամկետի խախտման համար,
- 2) էլեկտրամատակարարման արտապլանային ընդհատումից հետո՝ սույն կանոնների 28-րդ կետում սահմանված ժամկետ սպառողի էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետի խախտման համար, բացառությամբ, եթե էլեկտրամատակարարտապլանային ընդհատումները պայմանավորված են եղել էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներով,
- 3) վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մինչև սպառողի էլեկտրամատակարարումը դադարեց կանոնների 48-րդ և 49-րդ կետերում սահմանված ընթացակարգերի յուրաքանչյուր խախտման համար,
- 4) վճարման համար հատկացված ժամկետի խախտման համար սպառողի էլեկտրամատակարարումը դադարեցնելուց է վերականգնելու՝ սույն կանոնների 52-րդ կետում սահմանված ժամկետի խախտման համար,
- 5) հաշվարկային փաստաթղթում սխալի ուղղման՝ սույն կանոնների 11-րդ գլխում սահմանված կարգի յուրաքանչյուր խախտման համար,
- 6) սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման՝ սույն կանոնների 12-րդ գլխում սահմանված ընթացակարգերի յուրաքանչյուր խախտման համար,
- 7) առևտրային հաշվառքի սարքերի աշխատանքի ճշտության ստուգման համար սույն կանոնների 13-րդ գլխում սահմանված ընթացակարգերի յուրաքանչյուր խախտման համար,
- 8) սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերի փոխարինման համար սույն կանոնների 43.1 կետում և 14-րդ և սահմանված ընթացակարգերի յուրաքանչյուր խախտման համար,
- 9) սպառողի դիմում-բողոքին պատասխանելու համար սույն կանոնների 75-րդ կետում սահմանված ժամկետի խախտման համար,
- 10) Դիմող անձի դիմում-բողոքին պատասխանելու համար սույն կանոնների 75-րդ կետում սահմանված ժամկետի խախտման համար,
- 11) սպառողի դիմումի հիման վրա՝ Պայմանագրի վերակնքման՝ սույն կանոնների 4.3 կետով սահմանված ժամկետի խախտման համար:

(77-րդ կետը փոփ. 08.12.10 N 699-Ն, խմբ. 27.04.11 N 200-Ն, փոփ. 16.06.11 N 300-Ն, փոփ., խմբ. 11.04. N 105-Ն, փոփ., խմբ., լրաց. 08.10.14 N 379-Ն, լրաց. 09.12.15 N 409-Ն, փոփ. 09.11.16 N 303-Ն, 09.12.15 N 25.10.17 N 452-Ն, խմբ. 24.10.18 N 393-Ն)

77.1. Սույն կանոնների 77-րդ կետի համաձայն՝ տույժը վճարվում է սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքի տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2500 դրամը, բացառությամբ սույն կանոնների 77-րդ կետի 10-րդ ենթակետի, որի դեպքում վճարվում է տույժ 2500 դրամի չափով:

(77.1-ին կետը լրաց. 24.10.18 N 393-Ն)

78. Սպառողի կողմից սպառված էլեկտրաէներգիայի միջին ամսական արժեքն ընդունվում է հավասար սույն կանոնների կետում նշված խախտման հայտնաբերմանը նախորդող 12 օրացուցային ամիսներին սպառողի ծախսած էլեկտրաէներգիայի նույն ժամանակահատվածում ծախս ունեցած ամիսների քանակի քանորդին:

(78-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն, խմբ. 24.10.18 N 393-Ն)

79. Հաշվարկված տույժը մատակարարը հաշվի է առնում սպառողին ընթացիկ ամսում ծախսած էլեկտրաէներգիայի հաշվարկայացվելիք հաշվարկային հաշվում: Հաշվարկված տույժը հաշվարկային հաշվում նշվում է առանձին տողով և նվազեցվել սպառված էլեկտրաէներգիայի արժեքից:

(79-րդ կետը փոփ. 08.10.14 N 379-Ն, 25.10.17 N 452-Ն)

80. Մատակարարը սույն Կանոնների 77-րդ կետում նշված խախտումների համար տույժ չի վճարում, եթե դրանք հետևաֆորս-մաժորի: Սույն Կանոնների իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքներն առաջացել են մատակարարի կամքից անկախ և մինչև ժամանակ անկախ վերջինիս գործադրած ջանքերից խոչընդ պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Սույն Կանոնների իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնաժին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջերկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքի գործադրումները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները և ապստամբությունները: Սույն՝

սահմանափակում մատակարարի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:
(80-րդ կետը խմբ. 11.04.12 N 105-Ն, 08.10.14 N 379-Ն)

Գ Լ ՈՒ Խ 17

ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

81. (կեսն ուժը կորցրել է 09.12.15 N 409-Ն)

82. (կեսն ուժը կորցրել է 05.09.12 N 346-Ն)

83. Մինչև 40 կՎԱ հզորությամբ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցավ միացման դեպքերում սույն կանոնների 2-րդ գլխի դրույթները կիրառվում են 2010 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2010 թվականի հունվարի 1-ը տեխնիկական պայմաններն առաջադրում է մատակարարը, իսկ լրացուցիչ պայմանները՝ այն անձը, որի էլեկտրատեղակայանքներին միացվում է սպառման համակարգը: Տեխնիկական պայմանների կատարման առավելագույն ժամանակահատվածը է 2 տարի, եթե տրված տեխնիկական պայմաններում այլ ժամկետ չի նախատեսված: Տեխնիկական պայմանները երկրորդ անկախ սնում կարող է տրվել միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է Դիմող անձի սպառման համակարգի ն (նախադասությունները հանվել են 25.10.17 N 452-Ն) 6 (10) կՎ և բարձր լարման ցանցին միանալու դեպքում նոր մի կամ վերակառուցվող սպառման համակարգը լարման տակ դնելու համար Դիմող անձը մատակարարին է ներկայացնում պետիկական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացությունը (թույլտվությունը): (նախադասությունը հանվել է 21.12.11 N 596-Ն)

(83-րդ կետը լրաց. 25.04.08 N 209-Ն, փոփ. 24.12.08 N 711-Ն, 08.12.10 N 699-Ն, փոփ. 21.12.11 N 596-Ն N 452-Ն)

84. Սույն կանոնների 2-րդ գլխի դրույթները կիրառվում են էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձանց վրա՝ 2013 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա ունեցող անձանց սպառման համակարգի՝ էլեկտրա ցանցին միացման տեխնիկական պայմանների տրամադրումն իրականացվում է սույն կանոնների 83-րդ կետի համաձայն:

(84-րդ կետը լրաց. 27.05.09 N 256-Ն, փոփ. 08.12.10 N 699-Ն)

85. Սույն Կանոնների 43-րդ կետով սահմանված՝ սպառված էլեկտրաէներգիան էլեկտրոնային հաշվիչով հաշվառելու դեռ առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի փոխարեն ավտոմատացված ռեժիմում առևտրային հաշվիչի լուսատվոս արտածվող՝ սպառողի նախորդ հաշվարկային ամսվա ծախսը (ըստ սակագների) գրանցելու պահանջը գործում է 2015 թվականի մարտի 1-ից: Մինչև 2015 թվականի մարտի 1-ը մատակարարը գրանցում է էլեկտրոնային առևտրային (վերստուգիչ) հաշվիչ ցուցմունքը:

(85-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

86. Սույն Կանոնների 64-րդ կետի 4) -րդ ենթակետով սահմանված պահանջը գործում է 2015 թվականի մարտի 1-ից:

(86-րդ կետը լրաց. 08.10.14 N 379-Ն)

(հավելվածը խմբ. 06.04.07 N 155-Ն, լրաց. 16.10.07 N 421-Ն, խմբ., փոփ. 21.12.07 N 658-Ն, լրաց. 25.04.2009-Ն, փոփ. 24.12.08 N 711-Ն, խմբ. 11.03.09 N 93-Ն, լրաց. 27.05.09 N 256-Ն, 03.06.09 N 258-Ն, 04.08.10 լրաց., փոփ. 08.12.10 N 699-Ն, խմբ., լրաց., փոփ. 27.04.11 N 200-Ն, խմբ. 04.05.11 N 216-Ն, լրաց. 13.07.11 խմբ. 27.06.11 N 307-Ն, խմբ., լրաց., փոփ. 16.06.11 N 300-Ն, լրաց., փոփ. 07.12.11 N 566-Ն, փոփ. 21.12.11 Ն, խմբ. 07.12.11 N 567-Ն, լրաց., խմբ., փոփ. 07.03.12 N 65-Ն, փոփ. N 21.03.12 N 78-Ն, լրաց. 30.05.12 N խմբ., փոփ. 22.08.12 N 334-Ն, փոփ., խմբ. 11.04.12 N 105-Ն, խմբ., փոփ. 05.09.12 N 346-Ն, փոփ. 07.11.12 լրաց. 13.06.12 N 208-Ն, փոփ. 05.09.12 N 347-Ն, խմբ., լրաց. 06.03.13 N 62-Ն, լրաց. 27.02.13 N 53-Ն, խմբ. N 16-Ն, փոփ. 30.04.14 N 103-Ն, լրաց. 27.11.13 N 405-Ն, խմբ., լրաց., փոփ. 08.10.14 N 379-Ն, փոփ. 25.11. Ն, լրաց., փոփ., խմբ. 09.12.15 N 409-Ն, 03.08.16 N 230-Ն, 09.11.16 N 303-Ն, 17.05.17 N 161-Ն, 31.05.17 N 25.10.17 N 452-Ն, խմբ., փոփ. 15.11.17 N 491-Ն, խմբ., լրաց., 02.05.18 N 140-Ն, 24.10.18 N 393-Ն, փոփ. 0 130-Ն, խմբ., լրաց. 19.06.19 N 214-Ն, խմբ. 28.08.19 N 317-Ն)

Հավելված N 1
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2006 թվականի դեկտեմբերի 27-ի
N 358-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄՍՏԱԿԱՐԱՐԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ (ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ) ՕՊԵՐԱՏԻՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սույն կարգով կանոնակարգվում են սպառողի (բացառությամբ բնակչության) (այսուհետ՝ Սպառող) սարքավորումների և ռելեական պաշտպանության ու ավտոմատիկայի սարքվածքների (այսուհետ՝ սարքավորումների ու ՌՊԱ սարքվածքների) մատակարարի օպերատիվ կառավարման և (կամ) վարույթի ներքո (այսուհետ՝ օպերատիվ ենթակայությանը) հանձնելու ընթացակարգն ու դրանց կարգավարման ընթացքում մատակարարի և Սպառողի օպերատիվ փոխհարաբերությունները:

(նախաբանը լրաց. 06.04.07 N 155-Ն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը տարածվում է այն Սպառողների վրա, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարության թվականի նոյեմբերի 23-ի N 1939-Ն որոշմամբ հաստատված «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահեկաններ» Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգով սահմանված է օպերատիվ անձնակազմ (էլեկտրատնտեսության պատասխանատու) ունենալու պահանջը:

(1.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

1.2. Մատակարարի օպերատիվ ենթակայությանը հանձնելու ենթակա սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների ցանկը սահմանում է մատակարարը՝ քննարկելով այն սպառողի հետ: Այդ ցանկում ներառվում են Սպառողի այն սարքավորումները սարքվածքները, որոնց կարգավարումը մատակարարի կողմից անհրաժեշտ է սպառողների էլեկտրաէներգիայի մատակարար հուսալիությունը և բաշխման ցանցի անվտանգ շահագործումն ապահովելու համար: Ցանկում ներառվում են նաև Սպառողի սարքավորումները և ՌՊԱ սարքվածքները, որոնց օպերատիվ ենթակայությունը մատակարարի կարգավարին անհրաժեշտ է էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովելու համար:

(1.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

2. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Մատակարարը պարտավոր է՝

- 1) իրականացնել իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Սպառողի սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների օպերատիվ կարգավարումը՝ հիմք ընդունելով այդ սարքավորումների և սարքվածքների տեխնիկական անձնագրերով սահմանված հարապատասխանությունները:
- 2) տեղեկացնել «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության Հայաստանի Հանրապետության օրենքով լիազորված մարմնին իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումն ՌՊԱ սարքվածքներում տեղի ունեցած վթարների մասին՝ դրանց քննությունը կազմակերպելու համար:
- 3) առնվազն երեք տարի պահպանել օպերատիվ գրանցամատյանները և գրանցող սարքերի տեխնիկական հնարավորությամբ սահմաններում օպերատիվ խոսակցությունների ձայնագրությունները, եթե այլ բան օրենքով նախատեսված չէ:
- 4) Սպառողի օպերատիվ անձնակազմի պահանջով տրամադրել տեղեկություններ իր էլեկտրամատակարարման արտապահանջի և սնող գծերի էլեկտրական հարաչափերի (բեռ, լարում և այլն) վերաբերյալ:
- 5) Սպառողի տնօրինության տակ գտնվող տարածքներ մուտք գործելիս պահպանել դրանցում գործող կանոնակարգը:

(2.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն, 24.10.18 N 393-Ն)

3. ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Սպառողը պարտավոր է՝

- 1) հանձնել մատակարարի օպերատիվ ենթակայությանն այն սարքավորումները և ՌՊԱ սարքվածքները, որոնք ընդգրկվել են վերջինիս սահմանած ցանկում:
- 2) կատարել մատակարարի՝ իր իրավասությունների սահմաններում տրված օպերատիվ հրահանգներն ու կարգադրությունները բացառությամբ սույն կարգի 7.4 կետով սահմանված դեպքերի:
- 3) ապահովել փոխանցատուներ կատարելու իրավունք ունեցող մատակարարի օպերատիվ անձնակազմի շուրջօրյա անմուտք իր տնօրինության տակ գտնվող տարածքները՝ իրենց իրավասությունների սահմաններում պարտականությունների կրող նպատակով:
- 4) անհապաղ հայտնել մատակարարին նրա օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումներում և ՌՊԱ սարքվածքներում ի հայտ եկած բոլոր թերությունների և անսարքությունների մասին:
- 5) փոխհամաձայնեցնել մատակարարի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող իր սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների վերանորոգման կամ դրանք այլ նպատակներով աշխատանքից դուրսբերման տարեկան պլանները:

(3.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

4. ՕՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Մատակարարը և Սպառողը պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 20-ը միմյանց ներկայացնել մատակարարի և Սպառողի իրավասու անձանց կողմից հաստատված՝

1) օպերատիվ խոսակցություններ վարելու իրավունք ունեցող աշխատակիցների ցուցակը,
2) օպերատիվ խոսակցություններ վարելու և փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող օպերատիվ անձնակազմը
(4.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

4.2. Սպառողի կողմից մատակարարի օպերատիվ ենթակայությանը սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների հանձնու կատարվում է հետևյալ ընթացակարգով.

1) ամեն տարի մինչև նոյեմբերի 1-ը մատակարարը Սպառողին է ներկայացնում իր օպերատիվ ենթակայությանը հանձն ենթակա սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների ցանկը.

2) ամեն տարի մինչև դեկտեմբերի 1-ը Սպառողը մատակարարին է ներկայացնում վերջինիս ներկայացրած ցանկում ըն սարքավորումների միացման սխեմաները՝ նշելով սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների հարաչափերը:

(4.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

4.3. Սպառողի սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների հանձնումը մատակարարի օպերատիվ ենթակայությանը մինչև դեկտեմբերի 25-ը ձևակերպվում է Սպառողի իրավասու անձի և մատակարարի տեխնիկական ղեկավարի միջև կնքված համաձայնագրով, որը կցվում է Պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

(4.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

5. ՕՊԵՐԱՏԻՎ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Մատակարարի կարգավարները հերթապահության ընթացքում հանդիսանում են Սպառողի օպերատիվ անձնակազմ ղեկավարները՝ սույն կարգի 1.2 կետով սահմանված գործառնությունների շրջանակներում:

(5.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

5.2. Սպառողի սարքավորումները և ՌՊԱ սարքվածքները օպերատիվ ենթակայության տեսակետից կարող են գտնվել՝

- 1) մատակարարի կարգավարի օպերատիվ կառավարման և վարույթի ներքո,
- 2) մատակարարի կարգավարի օպերատիվ վարույթի և Սպառողի օպերատիվ կառավարման ներքո:

(5.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

5.3. Մատակարարի կարգավարի օպերատիվ կառավարման ներքո գտնվող սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների հե գործողությունները կատարում է Սպառողի օպերատիվ անձնակազմը՝ մատակարարի կարգավարի կարգադրությամբ: Վերջ յուրաքանչյուր գործողության համար տալիս է առանձին կարգադրություն:

(5.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

5.4. Մատակարարի կարգավարի օպերատիվ վարույթի և միաժամանակ Սպառողի օպերատիվ կառավարման ներքո գտն սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների հետ գործողություններ կատարում է Սպառողի օպերատիվ անձնակազմը՝ մատա կարգավարի թույլտվությամբ: Գործողությունները կատարվում են Սպառողի ներքին հրահանգների համաձայն:

(5.4-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԴՐԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՆՈՐՈԳՄԱՆ ԴՆԵԼՈ ՆՈՐՈԳՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1. Մատակարարի կարգավարի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումների ու ՌՊԱ սարքվածքների նորոգումները կատարվում են Սպառողի կողմից տրված հայտերի համաձայն:

(6.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.2. Հայտերի մեջ նշվում են սարքավորման կամ ՌՊԱ սարքվածքի կարգավարական անվանումը, աշխատանքների բովանդակությունն ու ժամկետը, անհրաժեշտության դեպքում սարքավորումը կամ ՌՊԱ սարքվածքը նորոգումից դուրս բերել աշխատանքի մեջ դնելու (վթարային պատրաստականություն) ժամկետը: Տվյալների անբավարարության դեպքում հայտերը ընդունվում:

(6.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.3. Պլանային նորոգումների համար մատակարարի կարգավարին հայտերը տրվում են առնվազն երկու աշխատանքային աշխատանքային օրվա ժամը 11.00-15.00-ն:

(6.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն)

6.4. Սարքավորման կամ ՌՊԱ սարքվածքի անհապաղ անջատելու անհրաժեշտության դեպքում Սպառողը, թույլտվությ ստանալով մատակարարի կարգավարից, անջատում է այն, այնուհետև տալիս է շտապ հայտ: Շտապ հայտերը կարող են յո շաբաթվա ցանկացած օրը և օրվա ցանկացած ժամին:

(6.4-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.5. Տարբեր միացությունների վրա հերթականությամբ նույնատիպ աշխատանքներ կատարելու դեպքում յուրաքանչյուր միացության համար ձևակերպվում է առանձին հայտ:

(6.5-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.6. Սարքավորման և ՌՊԱ սարքվածքի նորոգման ժամկետը երկարացնելու վերաբերյալ հայտերը հաղորդվում են դրան վերջնաժամկետը լրանալուց մեկ օր առաջ: Հայտում նշվում են երկարացման պատճառը և ժամկետը:

(6.6-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.7. Հայտերի պատասխանները մատակարարի կարգավարը հայտնում է Սպառողին հայտով նախատեսված նորոգումը:

մեկ աշխատանքային օր առաջ՝ մինչև ժամը 14⁰⁰-ն:

(6.7-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն)

6.8. Թույլատրված հայտով աշխատանքներն սկսելուց առաջ Սպառողի օպերատիվ անձնակազմը պարտավոր է մատակարարից թույլտվություն ստանալ սարքավորումը նորոգման դուրս բերելու համար: Մատակարարի կարգավարը կարող է կամ հետաձգել թույլատրված հայտը, եթե հայտով նախատեսված աշխատանքների կատարումը խաթարում է սպառողների էլեկտրամատակարարումը:

(6.8-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.9. Եթե Սպառողը թույլատրված հայտով աշխատանքը չի կատարում, ապա մատակարարի կարգավարը նշում է աշխատանքի կատարելու պատճառը: Այդ մասին մատակարարի կարգավարը համապատասխան գրանցում է կատարում օպերատիվ մատակարարի կարգավարին:

(6.9-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

6.10. Մատակարարի կարգավարը իրավունք ունի թույլատրել իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումները ՌՊԱ սարքվածքի վրա աշխատանքների կատարումը օպերատիվ կարգով, եթե դրանց տևողությունը սահմանափակվում է իր հերթափոխով:

(6.10-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԻ

7.1. Մատակարարի կարգավարն իրավունք ունի իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների վերաբերյալ տալ հետևյալ կարգադրությունները.

- 1) նորոգման դնելու կամ նորոգումից դուրս բերելու,
- 2) լարման տակ դնելու կամ հոսանքազրկելու,
- 3) գործողության մեջ դնելու կամ գործողությունից հանելու,
- 4) միացման կամ անջատման,
- 5) սարքավորումների և ՌՊԱ սարքվածքների գնումներ կատարելու:

(7.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.2. Մատակարարի կարգավարի յուրաքանչյուր կարգադրություն և դրա կատարման մասին Սպառողի օպերատիվ անձնակազմը հաղորդագրություն գրանցվում են մատակարարի կարգավարի և Սպառողի օպերատիվ մատյաններում:

(7.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.3. Ստանալով մատակարարի կարգավարի կարգադրությունը, Սպառողի հերթապահը պարտավոր է կրկնել այն, ստան հաստատումը և գրանցել օպերատիվ մատյանում, իսկ կարգադրությունը կատարելուց հետո գրանցել օպերատիվ մատյանում հայտնել մատակարարի կարգավարին: Եթե Սպառողի օպերատիվ հերթապահությունը իրականացվում է մեկ հերթապահի կամ ապա աշխատատեղից բացակայելու համար վերջինս պարտավոր է թույլտվություն ստանալ մատակարարի կարգավարից:

(7.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.4. Մատակարարի կարգավարների կարգադրությունները Սպառողի օպերատիվ անձնակազմը պարտավոր է կատարել վերապահումների, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կարգադրության կատարումը Սպառողի օպերատիվ անձնակազմի գնահատմամբ կարող է սպառնալ մարդկանց անվտանգությանը և էլեկտրատեղակայանքների ամբողջականությանը, ինչի մասին Սպառողի հերթապահը տեղեկացնում է կարգադրություն տվող կարգավարին, ինչպես նաև իր ղեկավարին՝ օպերատիվ մատակարարին կատարելով համապատասխան գրանցում:

(7.4-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.5. Այն դեպքում, երբ կարգադրություն ընդունողը համարում է այն սխալ, պետք է ներկայացնի հիմնավորված առարկու Կարգադրությունը կրկնվելու դեպքում Սպառողի օպերատիվ անձնակազմը պարտավոր է այն կատարել:

(7.5-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.6. Մատակարարի կարգավարն իրավունք ունի Սպառողի իրավասու անձից պահանջել փոխարինել իրեն օպերատիվ կամ ենթակա հերթապահին՝ վերջինիս կողմից իր պարտականությունները չկատարելու դեպքում:

(7.6-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

7.7. Հերթապահը համարվում է փոխարինված, երբ նոր հերթապահը ընդունում է հերթափոխը՝ օպերատիվ մատյանում և համապատասխան գրանցում:

(7.7-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

8. ՕՊԵՐԱՏԻՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

8.1. Օպերատիվ խոսակցությունները ներառում են.

- 1) Մատակարարի կարգավարի կարգադրությունները Սպառողի օպերատիվ անձնակազմին և վերջինիս կողմից դրանց կատարման մասին զեկույցը.
- 2) Սպառողի օպերատիվ անձնակազմի հաղորդագրությունները սարքավորման վիճակի փոփոխությունների, խախտումների և ռեժիմային հարաչափերի մասին:

(8.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

8.2. Օպերատիվ խոսակցությունների ժամանակ կարգավարները պարտավոր են միմյանց դիմել միայն պաշտոնապես՝

ազգանունով:

(8.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

8.3. Օպերատիվ կարգադրությունները պետք է տրվեն հստակ, առանց ավելորդ արտահայտությունների և որոշակի կրճատումներով, համաձայն մատակարարի կենտրոնական կարգավարական ծառայությունում գործող կարգավարական անվանումների և հասցավումների ցուցակի, որը վերջինս պարտավոր է տրամադրել Սպառողին:

(8.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

8.4. Կարգադրությունն ընդունող անձը պարտավոր է այն կրկնել, իսկ տվողը՝ հաստատել:

(8.4-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9. ՌԵԼԵԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԻԿԱՅԻ ՍԱՐՔՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԱՐՈՒՄԸ

9.1. Մատակարարի օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Սպառողի ՌՊԱ սարքվածքների նախադրվածքները հաշվատարման համար Սպառողին է առաջադրում մատակարարը:

(9.1-ին կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.2. Մատակարարը և Սպառողը ՌՊԱ սարքվածքների վերաբերյալ առաջադրանքները և տեղեկատվությունը պարտավոր միմյանց ներկայացնել գրավոր: Առանձին դեպքերում, ելնելով հրատապությունից, դրանք կարող են ներկայացվել հեռախոս տեսքով:

(9.2-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.3. Մատակարարից ՌՊԱ սարքվածքների դրվածքների փոփոխության վերաբերյալ առաջադրանք ստանալու դեպքում և պարտավոր է այդ առաջադրանքները կատարել նշված ժամկետում և անմիջապես հայտնել կատարման մասին:

(9.3-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.4. Վթարային անջատումների դեպքում, մատակարարի պահանջով, Սպառողը պարտավոր է 2 օրվա ընթացքում ներկայացնել տեղեկատվություն իր տարածքում տեղի ունեցած կարճ միացման տեղի և տեսակի վերաբերյալ, ինչպես նաև վթարի վերաբերյալ գրանցող սարքերից ստացված տեղեկատվությունը:

(9.4-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.5. Վթարային անջատումների դեպքում, եթե առկա է ՌՊԱ սարքվածքների սխալ աշխատանք, մատակարարի պահա Սպառողը կատարում է հեռավթարային ստուգումներ և ստացված արդյունքները գրավոր ներկայացնում մատակարարին:

(9.5-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.6. Սպառողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում վերացնել ՌՊԱ սարքվածքների անսարքությունները և այդ հայտնել մատակարարին:

(9.6-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.7. Սպառողը պարտավոր է մատակարարի հիմնավորված պահանջով կատարել ՌՊԱ սարքվածքների արտահերթ ստուգումներ:

(9.7-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

9.8. Սպառողը պարտավոր է պլանային և արտապլանային ստուգումներից անմիջապես հետո արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հայտնել մատակարարին:

(9.8-րդ կետը լրաց. 06.04.07 N 155-Ն)

(հավելվածը լրաց. 06.04.07 N 155-Ն, փոփ. 08.10.14 N 379-Ն, լրաց. 24.10.18 N 393-Ն)

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն

կարգավորող հանձնաժողովի

2006 թվականի դեկտեմբերի 27-ի N 358-Ն որոշմամբ հաս

կանոնների

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ____

ԿԱՌՈՒՅՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՍ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՎՈՂ ԹԱՂԱՍԱՍԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ (վերնագիրը խմբ. 31.05.17 N 220-Ն)

(կնքման վայրը)

_____ 20 թվական

Մատակարարը՝ _____

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս _____,
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է _____ հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգի միացման համար դիմող
(այսուհետ՝ Կառուցապատող)

_____ ,
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝
անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում՝ լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով
Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոն
(այսուհետ՝ ԷՍՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է միացնել _____

(կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի)

հասցեում գտնվող սպառման համակարգը (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրակա
միացում), իսկ Կառուցապատողը՝ վճարել էլեկտրական ցանցին միացման դիմաց:

2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐԸ

2. Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը (այսուհետ՝ Միացման վճար), կազմում է _____
դրամ, ներառյալ ԱԱՀ՝ համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածի:

3. Կառուցապատողը Միացման վճարը սույն պայմանագրի կնքման պահից 24 ամսվա ընթացքում փոխանցում է Մատու
սույն պայմանագրի վավերապայմաններում նշված բանկային հաշվին:

4. Մատակարարը էլեկտրական ցանցին միացումը ապահովում է Միացման վճարի վճարմանը հաջորդող _____ օրվա
ընթացքում (որը չի կարող գերազանցել ԷՍՕԿ-ով սահմանված ժամկետը)՝ համաձայն սույն պայմանագրի N 2 հավելվածով
սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N 3 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միազիծ սխեմայ
(4-րդ կետը փոփ. 02.05.18 N 140-Ն)

5. Կառուցապատողի կողմից Միացման վճարը սույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն չվճարելու դեպքում սույն պայ
լուծվում է՝ սույն պայմանագրի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապե
այլ օրենքներով, ԷՍՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

7. Մատակարարը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 4-րդ կետի համաձայն ապահովել Սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին՝ լարմ
չդնելով Սպառման համակարգը.

2) սույն պայմանագրի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Կառուցապատողի կողմից անհրաժեշտ աշխատանքները
չկատարելու դեպքում իրականացնել Սպառման համակարգի միացումը էլեկտրական ցանցին՝ Կառուցապատողի կողմից Մ
համակարգն էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքները կատարելու վերաբերյալ տեղեկացվելու
աշխատանքային օրվա ընթացքում.

3) Կառուցապատողին ներկայացնել Միացման վճարի վերաբերյալ հաշվարկային փաստաթուղթ՝ մինչև էլեկտրական ց
միացմանը հաջորդող ամսվա 10-ը.

4) սույն պայմանագրի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում Միա
վճարը վերադարձնել Կառուցապատողին՝ վերջինիս նախընտրած (կանխիկ կամ անկանխիկ) ձևով.

5) սույն պայմանագրի 5-րդ գլխում նախատեսված դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ըն
Կառուցապատողին պատշաճ ձևով տեղեկացնել էլեկտրական ցանցին միացման ժամկետների փոփոխության մասին.

6) Կառուցապատողին վճարել սույն էլեկտրական ցանցին միացման սույն պայմանագրով նախատեսված ժամկետների
դեպքում՝ համաձայն սույն պայմանագրի 12-րդ կետի:

8. Մատակարարն իրավունք ունի՝

1) Կառուցապատողի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում լ պայմանագիրը՝ սույն պայմանագրի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն:

9. Կառուցապատողը պարտավոր է՝

1) վճարել Միացման վճարը՝ սույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն.
2) իրականացնել Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքները, իսկ ն պարտավորության խախտման դեպքում՝ Մատակարարին տեղեկացնել աշխատանքների իրականացման ավարտի մասին:

10. Կառուցապատողն իրավունք ունի՝

1) գրավոր պահանջել Մատակարարից վերադարձնել Միացման վճարը՝ վճարման պահից 5 աշխատանքային օրվա ընթ Նշված ժամկետի ավարտից հետո Միացման վճարը վերադարձման ենթակա չէ.
2) սույն պայմանագրի 7-րդ կետով սահմանված ժամկետների խախտման դեպքում Մատակարարից պահանջել վճարելու սույն պայմանագրի 12-րդ կետի համաձայն:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կող պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՍՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանվ 12. Սույն պայմանագրի 7-րդ կետով սահմանված ժամկետները խախտելու դեպքում Կառուցապատողն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Միացման վճարի 0,1 տոկոսի չափով, բ ավելի, քան Միացման վճարի ընդհանուր գումարը, բացառությամբ սույն պայմանագրի 5-րդ գլխով նախատեսված դեպքերի Կառուցապատողը սույն պայմանագրի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն չի իրականացրել Սպառման համակարգն էլե ցանցին միացնելու համար անհրաժեշտ աշխատանքները:

5. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

13. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս-մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այ ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և մինչև ժամանակ անկախ վերջիններիս գործադրած խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:
14. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմի կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին աղետները, բնութ արտատվոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչո պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ այ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու հ 15. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևան վերացման հնարավոր ժամկետները:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

16. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կող պրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ:
17. Սույն պայմանագրի 16-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

18. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրի 3-րդ գլխով ամ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող Կողմերի պարտավորությունների ամբողջական կատս 19. Սույն պայմանագիրը լուծվում է՝
1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.
2) Կառուցապատողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու պայմանով.
3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Կառուցապատողի կողմից Միացման վճարը սույն պայմանագրի 3-րդ կետի հս չվճարելու կամ սույն պայմանագրի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն այն հետ պահանջելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՍՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Կառուցապատողի նախապես տեղեկացնելու պայմանով:

20. Հանձնաժողովի կողմից կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակ էլեկտրական ցանցին միացման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություն լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:

21. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պ որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:

22. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկ պարտավորությունների կատարումից:

23. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր և համար:

8. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

24. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մս ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առա դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:

25. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:

26. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

27. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝

- 1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարի մասին N 1 հավելվածը.
- 2) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N 2 հավելվածը.
- 3) Կառուցապատողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N 3 հավելվածը:

10. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝	Կառուցապատող՝
-----	-----
Գտնվելու վայրը՝	Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝
-----	-----
Հեռախոս -----	Ծանուցման հասցեն՝
Էլ. փոստ -----	-----
ՀՎՀՀ -----	Էլ. փոստ -----
Հ/հ -----	Հեռախոս -----
Բանկ -----	ՀՎՀՀ (իրավաբանական անձի դեպքում)
-----	-----
Գործունեության լիցենզիա N	Բանկ -----

Հ/հ -----

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.
(առկայության դեպքում)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 1

**Կառուցվող բազմաբնակարան շէ
կառուցապատվող թաղամասի ս
համակարգն էլեկտրական ցա
միացման պայմանագրի**

ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

1. Միացման վճարի չափն է՝ _____ :
2. Միացման վճարը հաշվարկվել է համաձայն Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 659-Ն որոշման հավի
_____ (կոնկրետ հղումը):

ՄՎ = Վստ + Վլրաց + Վպահուստ =

Վստ – մեծությունը, հաշվարկման կարգը (բանաձև), համապատասխան բաղադրիչները
Վլրաց – մեծությունը, համապատասխան բաղադրիչները
Վպահուստ – մեծությունը, համապատասխան բաղադրիչները

Մատակարար՝

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կառուցապատող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Հավելված N 2

**Կառուցվող բազմաբնակարան շէ
կառուցապատվող թաղամասի ս
համակարգն էլեկտրական ցա
միացման պայմանագրի**

ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մատակարար՝

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կառուցապատող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Հավելված N 3

Կառուցվող բազմաբնակարան շե
կառուցապատվող թաղամասի սս
համակարգն էլեկտրական ցա
միացման պայմանագրի

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻԾ ՍԽԵՄԱՆ

Մատակարար՝

(անուն, ազգանուն, պաշտոն)

(ստորագրություն)

Կառուցապատող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

(հավելվածը լրաց. 21.12.07 N 658-Ն, խմբ. 27.06.11 N 307-Ն, փոփ., խմբ. 30.05.12 N 187-Ն, խմբ. 31.05.Ն, փոփ. 02.05.18 N 140-Ն)

Հավելված N 3

ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27- N 358-Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարար օգտագործման կանոններին

Կ Ա Ր Գ

ՆՈՐ ՍՊԱՌՈՂԻ ԿԱՍ ՍՊԱՌՈՂԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՒՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

1. Սույն կարգով սահմանվում են մատակարարի կողմից նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համար էլեկտրական ցանցին միացման համար (այսուհետ՝ միացման դիմում) սույն կանոնների 13.2 կետով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը Դիմող անձի հայեցողությամբ էլեկտրոնային եղանակով մատակարարին ներկայացնելու պայմանները:

2. Միացման դիմումներն էլեկտրոնային կարգով ներկայացվում են հետևյալ հասցեով՝ www.ena.am/nor_miacum:

3. Դիմող անձը միացման դիմումը սույն կարգի 2-րդ կետում նշված հասցեում լրացնելուց բացի մատակարարին է ուղարկանում էլեկտրոնային կանոնների 13.2 կետով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված պատճենները՝ ԴՈՎ (DOC), ԴՈՎԻՔՄ (PDF) կամ ՋՓԵԳ (JPEG) ֆորմատների ֆայլերի տեսքով:

4. Միացման դիմումը համարվում է ներկայացված մատակարարի կայքում մուտք լինելու օրը: Մատակարարի մոտ միայն դիմումը մուտքագրված լինելու փաստը հավաստվում է հետադարձ ծանուցմամբ՝ էլեկտրոնային համակարգում դիմումը գրառված անմիջապես հետո, որը պարունակում է x-նիշանոց ծածկագիր:

5. Մատակարարը, միացման դիմումը ստանալու օրվանից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրելով դիմումն ընդունելու կամ մերժելու (ներկայացված տեղեկատվությունը և նյութերը (փաստաթղթերը) թերի լինելու դեպքում) մ Դիմող անձին տեղեկացնում է դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով: Բացի այդ, դիմումի ուսումնասիրման արդյունքները պետք է արտածվեն նաև մատակարարի էլեկտրոնային համակարգում:

6. Ներկայացված փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ նախագուշացում ստանալու դեպքում Դիմող անձը կարող է պակաս ներկայացված կամ ուղղված փաստաթղթերի տեսաներածված պատճենները:

7. Դիմող անձը սույն կարգի 6-րդ կետով նախատեսված անհրաժեշտ նոր փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնում է ներկայացված դիմումի՝ արդեն իսկ իրեն տրամադրված x-նիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով:

8. Դիմող անձը իրեն տրամադրված x-նիշանոց ծածկագրով կարող է մուտք գործել էլեկտրոնային համակարգ, որտեղ ար և է հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) միացման դիմումի համարը,
- 2) միացման դիմումի՝ մատակարարի էլեկտրոնային համակարգում ընդունված լինելու ամսաթիվը,
- 3) Դիմող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը)
- 4) պահանջվող հզորությունը, լարման մակարդակը,
- 5) միացման տեսակը (միաֆազ, եռաֆազ),
- 6) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կ Միացման պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացնելու ամսաթիվը,
- 7) փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու ամսաթիվը,
- 8) միացման վճարի վճարման առավելագույն ժամկետը՝ ներառյալ կանխավճարի կատարման առավելագույն ժամկետը
- 9) այլ պայմաններ (այդպիսիք լինելու դեպքում):

(8-րդ կետը փոփ. 31.05.17 N 220-Ն, 02.05.18 N 140-Ն)

9. Մատակարարը, միացման վճարի վճարման վերջնաժամկետից (այդ թվում նաև՝ կանխավճարի կատարման վերջնաժամկետից) օր առաջ, վճարումը կատարելու մասին հիշեցում է ուղարկում Դիմող անձին՝ միացման դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով:

10. Միացման դիմումը ընդունված լինելու վերաբերյալ Դիմող անձին տեղեկացնելու օրվանից սկսված՝ մատակարարը և կանոններով նախատեսված կարգով ընթացք է տալիս էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված միացման դիմումին:

(10-րդ կետը փոփ. 02.05.18 N 140-Ն)

11. Միացման դիմումը մատակարարի էլեկտրոնային համակարգում ընդունվելու օրվանից հետո, սույն կանոններով նախ կարգով է ժամկետում համապատասխան գործողություններն ավարտելուց հետո, մատակարարը դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով Դիմող անձին ներկայացնում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլ էներգիայի մատակարարման պայմանագիր կամ Միացման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի էլեկտրոնային համակարգում տեղադրելով միակողմանի ստորագրված պայմանագիրը:

(11-րդ կետը փոփ. 27.11.13 N 405-Ն, խմբ. 31.05.17 N 220-Ն, փոփ. 02.05.18 N 140-Ն)

12. Միացման պայմանագրի բնօրինակը կնքվում է դիմումին կից ներկայացված այն փաստաթղթերի բնօրինակները ներկայացրած, որոնք սույն կանոններով սահմանված կարգով մատակարարին պետք է ներկայացվեն բնօրինակի տեսքով:

13. Մատակարարը սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերի բնօրինակներն անմիջապես տեղում համեմատում դիմումին կցված փաստաթղթերի տեսաներածված պատճենների հետ՝ դրանց պատշաճ լինելու մեջ հավաստիանալու նպատակով հետո փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են Դիմող անձին: Նշված փաստաթղթերի բնօրինակները չներկայացրած միացման պայմանագիրը չի կնքվում:

(հավելվածը լրաց. 13.06.12 N 208-Ն, փոփ. 27.11.13 N 405-Ն, փոփ., խմբ. 31.05.17 N 220-Ն, փոփ. 02.05.140-Ն)

Հավելված N 4
ՀՀ հանրային ծառայություններ կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27- N 358-Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԴԱՀԱՆՁՈՂ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԱՍԱԿԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են էլեկտրամատակարարման անխուսափելի իրավիճակներում (այսուհետ՝ վթարային) իրավիճակներում Մատակարարի կողմից իրականացվող գործողությունների ծրագրերին ներկայացվող պահանջները և պայմանները նաև ամրագրված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորություններ ունեցող սպառողներին այդ ծրագրերում ներառվածները:

2. Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

- 1) **ավտոմատ բեռնաթափման ծրագիր**՝ համակարգի օպերատորի և մատակարարի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված, համակարգային ավտոմատիկայի սարքերով կրիտիկական (վթարային) իրավիճակներում իրականացվող, էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագիր.
- 2) **էլեկտրամատակարարման սահմանափակում**՝ ավտոմատ կամ կարգավարական բեռնաթափման ծրագրի համաձայն սնող գծի անջատում.
- 3) **կարգավարական բեռնաթափման ծրագիր**՝ համակարգի օպերատորի և մատակարարի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված, համակարգի կամ մատակարարի օպերատորի հրահանգով կրիտիկական (վթարային) իրավիճակներում իրականացվող էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագիր.
- 4) **սնող գծի անջատում**՝ համակարգային ավտոմատիկայի սարքերով կամ օպերատորի հրահանգով սպառողի էլեկտրամատակարարումը ապահովող էլեկտրահաղորդման գծի անջատում սնող կենտրոնից.

5) սնող կենտրոն՝

Էլեկտրաէներգիա արտադրող, հաղորդող ընկերությունների բաշխիչ սարքավորում, ինչպես նաև մատակարարի 35, 110 կՎ ենթակայան, որտեղից իրականացվում է սպառողների էլեկտրամատակարարումը:

(2-րդ կետը փոփ., լրաց. 25.10.17 N 452-Ն)

Գ Լ Ո Ի Խ 2.

Վթարային իրավիճակներում մատակարարի կողմից իրականացվող ծրագրերին ներկայացվող պահանջ

3. Վթարային իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումները իրականացվում են ավտոմատ բեռնա և (կամ) կարգավարական բեռնաթափման ծրագրերով, որոնք համատեղ կազմում են համակարգի օպերատորը և Մատակար ելնելով համակարգի անվտանգությունն ու հուսալիությունն ապահովող հաստատված ցուցանիշներից, ինչպես նաև որոշակի սպառողների էլեկտրամատակարարման առաջնահերթության պայմաններից:

4. Ավտոմատ բեռնաթափման և կարգավարական բեռնաթափման ծրագրերում չեն ընդգրկվում կայանների սեփական կա պահուստային էլեկտրասնուն մն ապահովող էլեկտրահաղորդման գծերը:

5. Ավտոմատ բեռնաթափման ծրագրերը կազմվում են հետևյալ պայմանների պարտադիր կատարմամբ.

1) ամրագրված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորություն ունեցող այն սպառողների նկատմամբ, որոնց էլեկտրամատակարարման սահմանափակումը կարող է հանգեցնել մարդկանց կյանքի և շրջակա միջավայրի համար իրակա անխուսափելի վտանգի և որոնց համար տեխնիկական կանոնակարգերով չի նախատեսվում սպառողին պատկանող էլեկտրս անկախ աղբյուր, էլեկտրամատակարարման սահմանափակում չի կիրառվում: Այդ բոլոր սպառողների ամրագրված տեխնոլ վթարային հզորությունների գումարային արժեքների մեծությունը չպետք է գերազանցի համակարգի անվտանգությունն ու հուսալիությունն ապահովող հաստատված ցուցանիշների հիման վրա համակարգի օպերատորի կողմից հաշվարկված մեծույ

2) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սպառողների, ինչպես ամրագրված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորություն ունեցող սպառողների անընդհատ տեխնոլոգիական ցիկլը և (կտ անվտանգությունն ապահովող սնող գծի անջատումը կարող է իրականացվել ծրագրի վերջին հերթում.

3) էլեկտրամատակարարման սահմանափակում կիրառվում է մնացած բոլոր սպառողների նկատմամբ:

6. Սպառողները, որոնք, ըստ իրենց տեխնոլոգիաների կամ ծառայությունների բնույթի, պետք է պարտադիր կերպով ունե էլեկտրասնուն սեփական անկախ պահուստային աղբյուր, սահմանվում են Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով:

7. Ավտոմատ բեռնաթափման ծրագրերում ներառված բոլոր սպառողների էլեկտրամատակարարման պայմանագրերում կատարվում կիրառվող հերթի վերաբերյալ:

8. Կարգավարական բեռնաթափման ծրագրերը կազմվում են հետևյալ պայմանների պարտադիր կատարմամբ.

1) սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված սպառողների նկատմամբ, էլեկտրամատակարարման սահմանափա է կիրառվել միայն ծրագրի վերջում և օպերատիվ կարգով սպառողի համաձայնությունն ստանալուց հետո.

2) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սպառողների, ինչպես ամրագրված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորություն ունեցող սպառողների անընդհատ տեխնոլոգիական ցիկլը և (կտ անվտանգությունն ապահովող սնող գծի անջատումը կարող են իրականացվել ծրագրի վերջին հերթում՝ առանց համաձայնե նախազգուշացման.

3) առանց համաձայնեցման կամ նախազգուշացման էլեկտրամատակարարման սահմանափակում կիրառվում է մնացս սպառողների նկատմամբ:

(8-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

9. Էլեկտրամատակարարման սահմանափակումները կիրառվում են սպառողներին այդ մասին անհապաղ տեղեկացնելո պայմանով: Սպառողների տեղեկացման ձևերը սահմանվում են էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրով:

10. Սույն կարգով իրականացվող էլեկտրամատակարարման սահմանափակումների անընդմեջ տևողությունը չպետք է գ 4 ժամը:

11. Գրիտիկական (վթարային) իրավիճակների վերացման ընթացքում սպառողների էլեկտրամատակարարումը վերական հետևյալ հերթականությամբ.

1) սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված սպառողների խումբ.

2) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սպառողների խումբ, ի ամրագրված տեխնոլոգիական և (կամ) վթարային հզորություն ունեցող սպառողների խումբ՝ առնվազն միացնելով անընդհատ տեխնոլոգիական ցիկլը և (կամ) վթարային հզորությունն ապահովող սնող գիծը.

3) մնացած բոլոր սպառողները:

(11-րդ կետը փոփ. 25.10.17 N 452-Ն)

12. Վթարային իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերի կիրառման վերաբերյալ ո կայացնում է համակարգի օպերատորը: Այդ իրավիճակներում համակարգի օպերատորը կարող է կատարել անջատումներ՝ իսկ հնարավորության դեպքում տեղեկացնելով մատակարարի օպերատորին:

				էլեկտրա- ընդու- նիչներ, որոնց էլեկտրա- մատակա- րարման սահմանա- փակումը կարող է հանգեցնել մարդկանց կյանքի և շրջակա միջավայրի համար իրական ու անխու- սափելի վտանգի	սնող գծի վրա վթա- րային հզորու- թյունը, կՎտ	սնող գիծ, որի վրա տեղա- փոխվում է վթա- րային հզորու- թյունը	էլեկտրա- ընդու- նիչներ, որոնց էլեկտրա- մատակա- րարման սահմանա- փակումը կարող է հանգեցնել մարդկանց կյանքի և շրջակա միջավայրի համար իրական ու անխու- սափելի վտանգի	սնող գծի վրա տեխնոլո- գիական հզորու- թյունը, կՎտ	սնող գիծ, որի վրա տեղա- փոխվում է հզորու- թյունը	հզորու- թյունը, կՎտ	օրական էլեկտրա- ապահովումը, կՎտժ	Ընդհա- նուր բեռը, կՎտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ընդ.												

2. Հզորություն, որը ենթակա է անջատման

N	սնող կենտրոն	սնող գիծ	սնող գծի բեռը, կՎտ	սնող գծի վրա տեխնոլոգիական և վթարային ամրագրված հզորությունների գումարը, կՎտ	սնող գիծ, որի վրա է տեղափոխվում ամրագրված հզորությունը	անջատման ենթակա հզորությունը, կՎտ	նշումներ
1	2	3	4	5	6	7	8
ընդ.							

3. Հզորություն, որը ենթակա չէ անջատման մինչև տեխնոլոգիական գործընթացի տևողության և վթարային հզորության ապահովման համար անհրաժեշտ ժամանակահատվածի ավարտը

N	սնող կենտրոն	սնող գիծ	առավելագույն հզորությունը սնող գծի վրա, կՎտ	վթարային ամրագրված հզորությունը, կՎտ	տեխնոլոգիական ամրագրված հզորությունը, կՎտ	նշումներ

1	2	3	4	5	6	7
ընդ.						

 (ընկերության անվանումը)

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի

Տնօրեն _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Տնօրեն _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

----- 201__ թ.

----- 201__ թ.

(հավելվածը լրաց. 17.05.17 N 161-Ն, փոփ., լրաց. 25.10.17 N 452-Ն)